Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1690 нку

1174

X 16
1239

ԵՈՐ ԵՐԳԱՐԱՆ

ԿԱՄ

ԲՆԱՐ ՀԱՅԵՍՏԱՆԻ

Մասն Ա. եւ Բ.

ԱՌՁԳԱՍԻՆ ԵՐԳԵՐ ԵՒ ԳԱՆԱՀԱՏԵԼԻ ԵՒ ԱՌԱՂԱՆ
ՀՍՏԱԿԱԲԱՐԵՐ

ԿԱՄ

Բոլամիրզայ Քիւն քնդնամուր Աշգայեն
Երգաց սկսեալ յուսալէոյ սարեկարան
մինչ զկիրճերայ սարեկարան Աշգայեն
Կոմիտասարգար Քեսան Հայոց։

ՀԱՒԱՔԵՑԵՐ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՀՈՅՍ ԸՆԾԱՅԱՆՑ

ԳՐԱՏԱՒԱՌ ՀԱՅԱՔՆԵՐ Դ. ԴԱՅԱՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. ՊԻՒՇԻԼԵԱՆՑ

1867

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

ԿԱՄ

ՔՆԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Մասն Ա.

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ ԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ

ԿԱՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՅԻՆ

ԵՐԳՈՑ ՍԿՍԵԱԼ ՅԱՌԱՋՆՈՅ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ՄԻՆՉ ՅՎԵՅԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱԶԳ.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Վերջերորդ Տպագրութիւն

ԻԼՈՅՍ ԸՆԾԱՅԵԱՑ

ԴՐԱՎԱՃԱՌ ՅՈՎՍԵՓ Դ. ԳԱԳԱՓԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻՒՍԻՆԵՏԻՍԵԱՆ

1867

565

1688

ԳՐԱՎԱՃԱՌ ՅՈՎՍԷՓ ԳԱՖԱՖԵԱՆ

Ի Կ. ՊՕԼԻՍ ՓԻՒՐՔՃԻ–ԽԱՆ ՎԵՐԻ ՅԱՐԿ ԹԻՒ 25

Հետեւեալ գրքերը ամեն դիմելով կը ծախուին նոյն իսկ դրատան մէջ.

	ԳԻՆ.
Նոր երդարան Ա. և Բ. Մաս	6
Բարեկենդանի դիշերները	3
Ֆոսթ և Մարգրիտ	3
Աղջիկ կամ Ամերիկացիք	3
Գերեզմանք երիտասարդաց	3
Գարնան ծաղիկներ	3 1/2
Գեոլիկին գրքոյկը	1
Մինդրդատ ողբերգութիւն	3
Բարի երիկուն Պ. Բանեմալջն	2
Գանգուխտ կամ կեանք Աղուանցւոյ	5
Գիտութիւն մարդկային վարմանց	6
Գաղտնիք բնութեան	10
Ծաղկաքաղ բարոյական	1

Քերական. Հեգարան. Սաղմոս. Ժամագիրք. Դարեկ. Օրացոյց. Աւետարան. Գործոց ճաշոց Թատերգութիւնք եւն. Նոցանց տեսակները խիստ ամեն դիմելով։

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ամեն ազգ ամեն ժամանակ իւր բանաստեղծութիւնն և իւր երգիչները ունեցեր է, որք իրենց ապրած ժամանակին հանգամանաց համեմատ հասարակութեան զգացման թարգման կանգնելով՝ երգեր են կամ ողբացեր ժողովրդեան մը, ազգի մը բազդը կամ թշուառութիւնը։ Ըստ իմաստուն մեծ կարեւորութիւն կընծայեն երգերու, և ազգի մը պատմական ճշգրիտ և կենդանի նկարագիրը կը համարին զանոնք։

Ի հարկէ մեր ազգն ալ ունեցեր է իւր ազգային կեանքը քնարներու վրայ երգող բանաստեղծներ, որոնց ամենէն ընտրելագոյն և հնագոյններէն հալիւ մէկ քանի պատառիկ աղաւաղեր են ժամանակին ամենածախ ժանեաց ձեռքէն մեր Խորենացի քերթողահօր շնորհիւ։ Իսկ վերջին դարերու համար երգերու նշանաւոր հաւագածոյ մը չէ հնար ընծայել ազգին, բաց 'ի անոնցմէ որ ասդիս անդին զանազան գրոց անկիւնները ցրիւ կը գտնուին։

Շատ տարի չկայ, որ Բենդրոպուրկի և Տփխիսու մէջ աղգային երգոց հաւագածոյներ հրատարակուեցան, որոնք բոլորն ալ վերջին ժամանակի գործեր են, բայց և այնպէս գովելի և բազմոգուտ աշխատութիւն։

Երանի՜ թէ ուրիշներն ալ, աւելի Հայաստան աշխարհին զանազան գաւառները երգուած երգերն հաւաքէին և տպագրութեամբ 'ի լոյս ընծայէին 'ի վայելս բանասիրաց։

Այսու մտոք 'ի լոյս ընծայուեցաւ այս Երգարանը որ գլխաւորապէս մեր տարիներս Տաճկաստանի և Ռուսաստանի մէջ յօրինուած բանաստեղծական երգոց հաւաքածոյ մ'է, ուրկից ապագայ բանասիրութիւնը մեծապէս լոյս պիտի առնէ մեր ժամանակներուը հասարակաց վրայ տիրող զգացմանց և գաղափարաց վրայ։

Յ. Գ. ԳԱՓԱՓԵԱՆ

ՑԱՆԿ Ա· ՄԱՍԻՆ

Աղաւ Աստուածն այն օրից 15
Յաղաւն 'ի վեր 'ի Մասիս 24
Ա՛խ Հայաստան, Հայաստան 26
Ակռիին մեծ կաթաւին 28
Ահա բաժակ ուրախութեան 29
Ահա հրեշտակ սակեփեստուր 31
Ահա յերկնից ժպտի Աստուած 32
Անի քաղաք նատեր կուլայ 33
Առ, ընկալ ի գիրկդ մայրդ Հայաստան 36
Արի՛ք հայկազունք յառաջ ընթանանք 8
Արիք Հայկայ քաջ սերունդք 37
Աւուր միում մի՛կ քարահատ 39
Բամբ · · · որոտան բարձրաստ 43
'Ի Բիւր ճայնից բնութեան շըքեղ 45
Գարուն Հայաստան 12
Երբոր բացուին դաշտերն յուռոյ 99
Գարուն էր կենաց դեռ 47
Ես դալար ծառ մի անկեալ 'ի Հայկայ 49
Զերկնաբերձ գլխով սառնապատ լերին 50
Ի ղուր ամպերն որոտացին 52
Էյ սերվէրի կերտուն մեգամ 54
Ընկերք յաղթութեան ժամն արդ հաս է 55
Թէ իմ ալեաց հերքս սեւնային 56
Թէ իմն հայրենեաց քնար ոգաւոր 58
Թէպէտ ես մեծ տան նշան եմ 61
Իմ հայրենիքս ղնս կը կանչէ 62
Իմ սիրելի ղաւակունքս 64
Լուռ և սխուր դաշտեր գեղեցիկ 72

'Ի Խուռմբ 'Ի պար Հայրենասէր 65
Կար Ժամանակ որ և Հայերն 66
Հայաստանեայց սև տխրագին օրերը 13
Հայաստան երկիր դրախտավայր 1
Հայաստանի բարձր ու շքեղ սարերէն 4
Հայկաղունք պար բռնենք 80
Հայուն աչքէն ոյ շը հոսէ դառն արցունք 67
Հուր բարկութեան համայն Հայոց 98
Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր 6
Հրեշտակ մասեաց մրտենիներ 'Ի ձեռ ին 19
Մայր--Արարքի ափերով 68
Մանկութեան օրերս երազի նման 73
Մեր հայրենեաց փափուկ հողեր 76
Մեր սիրուն հայրենեաց 79
Մինչդեռ գիշերոյ խաղաղ թագուհին 81
Մինչ հայրենի զուարթ յափանց տարագիր 82
Մնացեր բարեաւ սեր իմ 84
Մուսայք Մասեաց ելէք 'Ի դաշտ 84
Նուաղեալ կենաց իբրև յոյս 86
Նորի՛ր Շիրին , ասեմ՞ քեզ 88
Ո՛հ ինչ անուշ ինչ գեղեցիկ 93
Ո՛հ ինչ անուշ և ինչպէս զով 94
Ողջոյն ընդ քեզ Հայաստան 95
Ողջոյն քեզ ո՛ դաշտ և սիրուն ափունք 10
Ոչ զուարթ գարուն , ոչ օր մի սիրուն 17
Ով քաջարուն ձեզ հրաւէր 100
Տէր կեցո՛ դու զՀայս 97
Տուք ինձ ձեռնակ ճախրասրլոց 101
Փառ ցուրտ շիրմիդ 102
Օտար երկիր թափառած 103

ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստան երկիր դրախտավայր,
Դու մարդկանց ցեղիս որբան,
Դու և բնիկ իմ հայրենիք,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։
Ի վեհ անուանդ սիրտ իմ ահ յոյժ,
Ողևորի ի նոր խրախոյս.
Եւ անձկայրեաց ի քեզ յուսամ,
Ի քեզ, ի քեզ յոյս իմ միայն.
Հայաստան, Հայաստան, Հայաստան։
Հայաստան անուն փարելի,
Ի քեզ հանգիստ Նոյեան տապան,
Եգիտ և քև ապրեցաւ Նոյ,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։
Գեռք քաջառաջք ադենաբուլխ,
Զհողդ բարի առնեն յուռթի.
Քև ապրիմ ես, քև միշտ ցնծամ,
Քև, քև պանծամ փառք իմ միայն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։
Հայաստան ծնող դիւցազանց,

Եւ Հրաշալեաց Հանդիսարան.
Քո գեղիւռին քաղցր է շնչիւն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։
Հայկ, Արմենակ, Արամ, Տիգրան,
Տրդատ, Սմբատ, Վարդան, Վահան.
Զոր շնչեցին և զօրացան,
Զքեզ յիշեմ զքեզ սիրեմ.
Զքեզ, զքեզ, սէր իմ միայն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։

Ց. ՄՈՒՐՃԱ ՎԱՆԱՆԴԵՑԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ՏԱՃԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հայաստանի բարձր ու շքեղ սարերէն,
Սաւառնաթև կը սրանայ սիրտս 'ի խինդ.
Սուրբ հրեշտակն աւետաբեր արդ ճեպով,
Ողջունել զօրս այս միութեան Հայերուն.
Շեզ աւետիս բերէ զուարթ բերկրութեան,
Հայեր, ուրախ, ալ չէ՛ տրտում Հայաստան։

Ելէք Տաճատեան,
Որդիք սիրարծած,
Տօնել քաղցր 'ի ձայն,
Զօրս ցնծաղդեաց։

Ահա պայծառ կը շողշողի սուրբ աստղն,
Ի ջինջ բևեռ մեր ցանկալի Հայրենեաց.
Հրճուի Մասիս, ցնծան Եփրատ և Տիգրիս,
Աշնիւ Ղարնեաց խայտան ոսկերքն ի շիրիմս.
Խրախոյս տալով Հայոց չքնաղ միութեան,
Հայեր ուրախ, ալ չէ տրտում Հայաստան։

Ելէք Տաճատ . . . ևն։

Դրօշակն ահա Սուրբ Վարդանայ կը բացուի,
Օն 'ի հանդէս ելէք, գոչէ ձեզ Տաճատ.
Օն 'ի հրճուանս, արդ մերժեցաւ սուգ և կոծ,
Եւ Հայրենիք նոր ցնծութեան առաւ ձայնք.
Ձեզ աւետիս կուտայ յաւէտ բերկրութեան,
Հայեր՝ ուրախ, ալ չէ տրտում Հայաստան։

Ելէք Տաճատ . . . ևն։

Կ. Վ. ՊԱՂՃԵԱՆ

ՑԱՒՈՒՐ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԴԴՐՈՒԹԵԱՆ

20 ՕԳՈՍՏՈՍ 1860

Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր,
Ի՞նչ կը յապաղէք ելնել ի հանդէս.
Ի՞նչ կը յապաղէք. — սիրտ կը դիմանայ,
Սիրտ որ ազգասէր ըլլալ կը ցանկայ։
Տեսնել Հայրենեաց այսքան բիւր աղէտ,
Եւ դու անտարբեր ցարդ մնալ յաւէտ.
Խեռ ատելութեան և չար նախանձու,
Սերմերն ա՛ռ ոչն հեռո՛ մղենք հեռու։
Սիրտ սրտի կապուած. թիւ թիւի տուած,
Հայրենեաց սիրոյ ասպարէզն բացուած.
Օն վազենք յառաջ ի սուրբ խաչն վառած,
Օն երթանք յառաջ. և անձնանուէր։
Հայրենեաց օգտին ըլլանք ուխտանուէր,
Հայ մի վհատիր, սիրտ ա՛ռ և սիրտ տուր.
Տկարք զօրանան, քաջք խրախուսին,
Վատերը բացուին, վատերը զատուին։

ճշմարիտ Հայերն յառաջ թող անցնին.
Խաչ, սէրն են նշան ճշմարիտ Հայուն,
Խաչ, սէրն են պարծանք ճշմարիտ Հայուն։

Սիրոյ դրօշները,
Թող արդ պարզուին.
Հաշտութեան ձայները,
Թող արդ հնչուին։
Հայն մէկ սիրտ եղաւ,
Սիրով միացաւ.
Սուտ են որ ըսեն,
"Հայ-ք զիրար կատեն"։

Սուրբ Արարատեան մայր աթոռոյն գիրկը,
Եկէք, հայկազունք եկէք միանանք.
Եւ ափսիեանք մեր վշտացած մօր սիրտը,
Օրհնելով Տէրը, որ զմեզ պարգևեց։
Մեր Ազգին կապն ու հոգին,
Ազգային Սահմանադրութիւնն։
— Յաւերժացի արդիւնաւէտ։

Ս. Գ. Գ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

ՅԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

1861 ՄԱՅԻՍ 24

Ուրիք Հայկազունք, յառաջ ընթանանք,
Սահմանադրութեան նոր բարեւ մ'ալ տանք.
Որ Ազգն երբ զԱնի փրկարար գոչեց,
Նոր հոգի, նոր կեանք Անոր պարգեւեց։
Եկէք բարեկամք, առ բարձեալն Աստուած
Ուղղենք մեր մաղթանք սուրբ սրտէ բղխած.
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ,
Ազգն ու Սահմանադրութիւն։
Օրինաց, բռնութիւն վատթար վարչութեան,
Բերին մահն ի դուռն Հայոց ազգութեան.
Սահմանադրութիւնն եկաւ զայն վանեց,
Եւ կենաց ուղին մեր առջեւ հարթեց։
Յառաջ, դիմութեան բացաւ ասպարէզ
Որ ամեն վայրկեան գոչել պարտ է մեզ.
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։

Ջնջեց ամենայն կարծիք անձնական,
Խեղդեց ամենայն ձայն անհաստատական.
Հրաւէր կարդաց Աստուծոյ ձայնին,
Առաջնորդ լինել գործոց ազգային։

Այն որ Աստուծու ձայն տուաւ մեզի,
Մենք թող առնու ձայնով մ'այնպիսի.
Կեցցէ, կեցցէ կեցցէ միշտ,
Ազգն ու Սահմանադրութիւն։

Հայերս անարգված գրկեց բարձրացուց,
Արդկային կոչման մեզ արժանացուց.
Շնորհեց մեզի զոր ազատն Աստուած,
Արդկութեան երկրորդ նշանն է դրած։

Որուն շնորհով յարգ ստացանք մենք,
Անոր յարգ տալով ապրինք ու երգենք.
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ,
Ազգն ու Սահմանադրութիւն։

Դուն ալ Հայաստան, սիրուն Հայրենիք,
Ալ այսուհետեւ մի սրդար լռիկ.
Օր մ'ալ քաւ որդիք նոր ոգւով բերկրեալ,
Օքեզ հարս կուզեն տեսնել զարդարեալ։
Ա՛լ մի լար մայրիկ, լացդ ի պար փոխե
Եւ ձայնավ քաղցրիկ որդւոցդ հետ երգէ

Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ.
Ազգն ու Սահմանադրութիւն։
Հայեր, միանանք մեր մօրն հետ օրհնենք,
Զանունք որ մեզի տուին սուրբ օրէնք.
Սահմանադրութեան բարեաց փոխանակ,
Թող վարեն ուրախ կեանք մի փառունակ։
Թող եւ մեր որդիք հետ անոնց անուան.
Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարդան.
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ.
Ազգն ու Սահմանադրութիւն։

Յ. Գ. ՍԸՎԱՃԵԱՆ

ՑԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

1862 ՄԱՅԻՍ 24

Ողջոյն քեզ ո՛ դաշտ և սիրուն ափունք,
Ուր այսօր սիրով խմբին Հայկազունք.
Հարց Հայաստանեայց սրբազան ածիւնք,
Թող ցնծան Հայոց ի սուրբ միութիւն։
Հէգ հայաստանի եմք մեք զաւակներ,

Հայեր զձեզ հոս հոս կոչողն է սէր.
Եւ հայրենիք՝ սուրբ հայրենիք։

Երեշտակն հայկազանց
Հոս կը սաւառնի.
Յառաջ, պատկաց
Ճակատք արժանի։

Սահմանադրութիւն
Սահմանադրութիւն,
Յորջորջի մեզ երկիրս և դու
Կեցցե՛ս։

Ո՛ հայրենեաց սէր
Որդիք անձնատուէր
Ի շինութիւն տան հայկազանց
Կեցցեն։

Ոգին միութեան
Որ զմեզ միաբան
Հոս գումարեց սիրոյ հանդէս
Կեցցէ՛։

ՆՇԱՆ ԶՕՀՐԱՊԵԱՆ

ԻՀԱՆԴԻՍԻ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Գարուն Հայաստան գայ ծաղկապսակ,
Զայն ողջունելու ելէք Հայ զաւակք.
Անցան սև օրեր, օրեր մահահոտ,
Հայոց նոր բաղդի ծագի առաւօտ
Սահմանադրութիւնն ուղեցոյց կենաց,
Սիրոյ դրօշակով եկաւ զարդարուած.
Որ փայլի Արև սուրբ Հայաստանի,
Որ Հայ Ազգութիւնն փառօք վերածնի՛.
Կեցցեն անձնուէր որդիք Հայկազուն,
Կեցցէ՛ Ազգային Սահմանադրութիւն։
Կաթիլ մ՚արտասուք հեղուն՝ք անենախանձ
Ի սուրբ յիշատակ մեր քաջ նախահարց
Կաթիլ մի քրտինք հեղուն՝ք անխնայ
Ի նպաստ Ազգիս յուսոյն ապագայ
Եւ ոչ իսկ խնայեն՝ք բոլոր մեր ճգուն՝ք
Կրօնի Հայրենեաց և Ազգի սիրոյն։

Որ փայլի Արև . . . ևն։

Հայեր, միանանք, կ'ընենք առաթուր
Ամէն ուժ և նենգ, պարիսպներ ամուր
Երկինք զայս մեր սուրբ կ'օրհնէ Միութիւն
'Ի Աստուած Գրիգորի զօրավիգ արթուն
Հապա խրախուսինք, կուրծք տանք անվեհեր
Ընկճենք կործանենք, ամէն արգելքներ։

Որ փայլի Արև . . . ևն։

Ունիմք սիրտ արի, ոգի եռանդուն
Ժառանգ մնացած բազուկ աննկուն
Դարերու յաղթող Ազգի զաւակ ենք
Ամէն նախատինք օ՛ն փութով ջնջենք
Անմահ Հայութեան կանգնենք յաղթանակ
Հայոց Մօր ճակտին հիւսե՛նք պերճ պսակ։

Որ փայլի Արեւ . . . եւայլն։

Ս. Գ. Գ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

ԱՐՇԱԼՈՅՍ ՀԱՅԱՍՏԱՆ

Ի ՀՈՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Հայաստանեայց սև տխրագին օրերը

փարատեցան, նոր հորիզոն բացուեցաւ,
Մեզի համար չէն այն մթին ամպերը,
Չի արշալոյս պայծառ դարձեալ փայլեցաւ։

Յուրախութիւն, ո՛ Հայեր,
Որդիք Հայկայ ե՛ Արամայ.
Ձեզ փառաւոր պողոտայ,
Հորդեն երկինք լուսաբեր։

Դուք դիւցազանց ձեւ է՛ք, Հայե՛ր, քաջ եղի՛ք,
Յառա՛ջ գացէ՛ք, յառա՛ջ, ահա՛ սպասրեզ.
Մայր Հայաստան ձեզ կը նայի աւասիկ.
Մեղմացուցէ՛ք իր պատուոյ՝ աղեկէզ։

Թշուառութեան բաժակը
Մինչև տակը քամեցինք.
Արդ ուղարկեց մեզ երկինք
Աւետաբեր հրեշտակը։

Այն հրեշտակը որ Զարդանոյ վեհ ոգին
Ի՛ Աւարայրի նահատակաց տուրբ գունդը
Ներկայացոյց Ամենակալ Աստային,
Մինչ կրակապաշտ Պարսիկն երթայր անդունդը։

Արդ՝ ձեզ կուգայ, հայկազունք,
Նոր աւետիս բերելով,

«Չէ՛ այլ ձեզ բազդէն խառով.
Դուք քաջարեաց, ո՛ մանկուանք»։
Օ՜ն խայտացէք, Գողթան երգեր թող հընչեն,
Թող արձագանգ տան եւ հովիտք, բլուրներ,
Մեր սիրտերը, որ սուրբ սիրով կը տրոփեն։
Թող միանան ու կորնչի անսուրբ հեռ։
Ի՛ ամեն տարի ցնծութեամբ,
Մեք այս շքեղ հովտին մէջ.
Հեշտին պարուց ելեւէջ.
Ընեմք դարձեալ վիւռթեամբ։

Ս. Հ. ՓԷԼԻԿԵԱՆ

ԵՐԳ. ԱՋԱՏՈՒԹԵԱՆ

Ազատ Աստուածն այն օրից,
Երբ հաճեցաւ շունչ փչել.
Իմ հոգանիւթ շինուածքին,
Կենդանութիւն պարգեւել։
Ես անբարբառ մի մանուկ,

Երկու ձեռքս պարզեցի.
Եւ իմ անզօր թեւերով,
Ազատութիւն գրկեցի։

Մինչ գիշերը անհանգիստ,
Օրօրոցում կապկապած.
Լալիս էի անդադար,
Մօրս քունը խանգարած։

Խնդրում էի նորանից,
Բազուկներս արձակել.
Ես այն օրից ուխտեցի,
Ազատութիւնը սիրել։

Թոռթոռալ լեզուս մինչ կապերը,
Արձակուեցան, բացվեցան.
Մինչ ծնողքս իմ ձայնից,
Խնդացին ու բերկրեցան։

Նախկին խօսքն որ ասացի,
Ձէր հայր կամ մայր, կամ այլ ինչ.
Ազատութիւն, դուրս թռաւ
Իմ մանկական բերանից։

"Ազատութիւն, ինձ կրկնեց
Ճակատագիրը վերևից.
"Ազատութեան դու զինուոր

կամիս գրվիլ այս օրից։
Ո՛հ, փշոտ է ճանապարհդ,
Քեզ շատ փորձանք կ'սպասէ.
Ազատութիւն սիրողին,
Այս աշխարհս խիստ նեղ է։»
— Ազատութի՛ւն, — գոչեցի, —
Թող որոտայ իմ գլխին.
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դաւ դնէ թշնամին։
Այս մինչ 'ի մահ, կախաղան
Մինչև անարգ մահու սիւն,
Պիտի գոռամ ամէն՝ կրկնեմ,
Անդադար, ԱԶԱՏՈՒԹԻ՛ՒՆ։ (1)



ՄԻՈՒԹԻՒՆ

Ի ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Ո՛չ զուարթ գարուն, ո՛չ օր մի սիրուն,

(1) Տես Հիւսիսափայլ· 1859· թիւ 9։

Եկաւ ու պարզեց մեզ այդն Հայութեան,
Որ գեղաճիճաղ ժպտէր ինդագոյն,
Քան սուրբ արշալոյս Սահմանադրութեան,
Որ առաւօտեց Հայոց սրտերուն,
Սէր և միութիւն։

Ո՛չ Արարատայ աւերակներէն,
Սիրավառ արև ծագեց կենսական.
Ո՛չ Մասիս հնցած ծերուկ ծոցերէն,
Քան զանբիծ արև սահմանադրութեան,
Որ ելաւ ծագեց Հայոց սրտերուն
Սէր և Միութիւն։

Յայն արիւնաներկ վայրերն ուր մէկիկ,
Մէկիկ անկան փառք Հայոց Ազգութեան.
Ո՛չ ընչեաց հովիկ մի սրտաղովիկ,
Քան զանուշ զեփիւռ Սահմանադրութեան,
Որ հեշտիկ փչեց Հայոց սրտերուն,
Սէր և միութիւն։

Ի գլխակորիկ շուշանիկն ու վարդ.
Որ ի սգապատ հովիտն Աթինեան՝
Ո՛չ երգեաց բնաւ թռչնիկ մի զուարթ,
Քան սիրուն սոխակ Սահմանադրութեան,
Որ ինքաւ երգեց Հայոց սրտերուն,

ՍԷՐ ԵՎ ՄԻՈՒԹԻՒՆ։

Ի պաղուկ լերանց ձիւնապատ ծայրէն,
Ձ՚ինչան առուակներ արծաթանման.
Ո՛չ վնիտ գետեր հեզիկ խոխոջեն,
Քան զուլուկ նեկտար Սահմանադրութեան։
Որ վազեց յորդեց Հայոց սրտերուն,
Սէր և Միութիւն։
Պարուն է եկեր Հայութեան ի դաշտ,
Ծլեր ու ծաղկեր Սէրն ու Միութիւն.
Ում Աստուած վերէն ժպտելով ի հաշտ,
Տուաւ պարգևեց Սահմանադրութիւն։
Որ նա պիտի տայ Հայոց սրտերուն,
Կեանք ու զօրութիւն։

Պ. Վ. ՊԱՌՆԱՍԵԱՆ

Ի ՀԱՆԴԷՍ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Հրեշտակ Մասեաց մրտենիներ 'ի ձեռին,

Արդ մեզ ձօնէ համբոյր սիրոյ կաթոգին.
Մեզզոր հոգին իր գեղեցիկ շրթունքէն՝
Վարդեր ծըլին իր զուարթագին ժըպիտէն.

Իւր մատունք կ'հիւսէն՝
Դիւցազանց պերճ պսակներ,
Հայ բազդին վրայ սփռեն.
Յուսաշող նշոյլներ։

Յաւերակաց Հայաստանի երգ հնչենք՝
Տան արձագանք այն սրտերուն որք քաջ են.
Ալիք՝ զալիս հեղահամբոյր ողջունեն
Ծաղիկք՝ ծաղկանց թեթև թևօք կ'գգուեն։

Այն քնքոյշ վարդենիք,
Զոր երկինք մեզ տուին,
Ո՛հ եղան հովանիք,
Անմեղաց սև բազդին։

Հայուն սրտին խորին վէրքերն թաղուեցան,
Ժամանակին հզօր ձեռօք 'ի դամբան.
Հայուն աչքին ալ քաղցրանան դառն արցունք.
Սէր կ' հնչեն մինչդեռ իրեն պարզ շրթունք։

Վարդանայ վեհ դափնիք,
Թո՛ղ նորէն ալ ծըլին.

Մինչ Հայկայ քաջ որդիք,
Զուարթ երգեն Հայրենին։

Ո՞ր արտասուաց մէջ մարեցան ո՞վ Հայեր,
Ասուածային այն ահաւոր կայծակներ.
Երբ հաշտութեան ձայնք կրկնեցին ամեն սիրտ
Երբ քաղցր աչօք մեզ ժպտեցաւ՝ Երկինք,
Ընդ դարձաւ Աղաւնեակն,
Տալով մեծ աւետիս,
Զուարթ բերաւ յաղթանակն՝
Հաշտութեան վերհ Ազգին։

Զարթնուն քաջերն ի բնագաւառն ի հանդէս,
Ո՛ւր պերճ փառաց եղև որոն ու ասպարէզ,
Հրճուի երկիր, ցնծան երկինք զուարթադէմ,
Մինչ գայլուսոյն չքնաղ հրեշտակ երկնաձէմ.
Երկնային զուարթունք,
Ո՛հ սիրոյ երգերով.
Կ՚նետեն մեզ ծաղկունք։
Անուշիկ նայուածքով։

Ընդուն վշտացդ մէջ տե՛ս Ազիդ կուտակեան,
Որդիքդ ինչպէ՛ս արցունքդ սրբել խոստանան.
Լանջք Հայկազանց քաղցրիկ երգերդ կ՚կրկնեն.
Հայոց կուսանք քայլերուդ տակ վարդք սփռեն

Բրաբիոն մանուշակ,
Ո՛վ սիրուն Հայրենիք.
Պիտ՝ հիւսուին քեզ պսակ,
Մինչ հաշտ են մեզ երկինք։

Ա. Ց, ԱՅՎԱԶԵԱՆ

ՆՈՒԱԳ

ՀՈՐՈՂ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Ա.

Ը.հա՛յ երկնից ժպտի Աստուած քաղցր առ մեզ,
Մինչ ձիթենեաց ստո՝ի ձեռին գանք հանդէս
Ուխտ՝ի բագին սիրոյ՝ դնենք ո՛հ սիրտք մեր,
Իղձք մեր թռչին թռչ՝ի լուսոյ կամարներ։
Ամպերուն մէջէն,
Կիսանուաղ աստղեր.
Պլսակ մեզ սփռեն,
Ու զուարթ նայուածքներ։

Անո՛ւնք Արամեան ծն առէք ի նուադ,
ՉՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆՆ՝ Հայուն յոյսն ու փառք։

Բ.

Օ՛ռ արձագիւք որդիք սիրոյ Հայութեան,
Ահա՛ ձեր ձայնք հասին երկնից ի խորան.
Փոխան փշոց՝ վարդք փթթեցան քո դաշտեր,
Եւ իրաւանցդ արդար՝ ՍԱՀՄԱՆ քեզ է տէր։

Թո՛ղ աչք քերդ դադրին,
Ուրցուն՝ ցողելէն.
Զի Հայկայ ճակատին,
Ասեղք չողշողեն։
Որդիք Արամեան, ծագի՛ Արշալոյս,
Դրոշմին 'ի ճակատ երկնաճաճանչ ՅՈ՛ՅՍ։

Գ.

Երբ յաւերակս լուռ հսկես մայրդ Հայաստան,
Աչքերդ ուղղէ, արդ՝ ի կամար Աստուածեան.
Տե՛ս աստղն Հայուն ինչպէս խայտայ լուսալար,
Լիաբերան օրհնէ՛ զորդիսդ փրկարար։

Օ՛ն Մուսայք Մասեաց,
Ի մէջ դարերուն.

Հնչէք Հայկազանց,

ՍԱՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ.

Որդիք դիւցազանց, օ՛ն գրկեցէք զիրար,
Օրհնեցէք մեր Սուլթանն՝ ԱԶԻԶ վեհափառ։

Ա. Ց. ԱՅՎԱԶԵԱՆ

Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՏՐԴԱՏԱՅ

ՑԵՏ ԲՈՒՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՍԱՄԱՆԵԱՆ

Յաղան ի վեր ի Փարիս,
Ելիք որդիկ Հայկեան՝
Ցրուեալքդ ի մի խուռմբ պարուռ
Բարեաց հողմոց փող ազգուռ՝
Յաստուած ախրախոյս ձայն։

Նախնի կամաք բազմերփեան,
Ահա պատի զնովուռ՝
Ամպրոպայոյզ մրրրկաց,
Հաշտարան պատերազմաց.
Տարփալին ցոլացաւ։

Զայն որոտաց ձայն ահեղ
Խորանաձև յարկէն
Արիագունդ տուն Հայկայ
Զոտապալեալ գահիդ ազգայ
Վերականգնեմ անդրէն։

Երդուեալ յաղեղն երկնածիր
Բարձի զբաղդ ձեր ի միտս
Թաթ ձեր յեթեր սլացաւ
Հակառակորդն սուզաւ
Վայր սանդարամետս։

Դիւցազանց պար Թորգոմեան
Տլեսրազգեաց յե՛զիսեանս
Ըզլթագոյն դիմաց մէջ
Յաստեղաց բոց վառին շէկ
Յաւեաեաց հրաւիրանս։

Ընդ իմ արի սպառազէնք
Տուք կայծս հոկայագայլ
Դաշտք ի պղինձ բոցասցին
Լերինք ի նշոյլ շլասցին
Զոկատիցդ, ի զեռալ։

Ահա ձեզ Հայկ երկնաձեմ

Հայր ձերում բանակի
Ասպարտիակ հովանեաւ
Զձեզ ի բարձանց փարեցաւ
Անթափանց նիզակի։
Խումբ պար առեալ զարքայիւ
Զօրավարք Ա բամայ
Բոլորեցէք համերամ
Պակ փառաց անթառամ
Կեցցէ Տրդատ մեր արքայ։

ԱՌ

ՀԱՅԱՍՏԱՆ

Ա՛խ Հայաստան, Հայաստան,
Ընդէ՞ր կորուաեր տէրդ.
Եղեր այլոց ապաստան,
Թառամեց վարդ պատկերդ։
Ո՛չ քեզ պէս բարեպաշտ կար,
Ո՛չ վանքերիդ պէս վանքեր.
Ո՛չ դաշտերիդ պէս դաշտ կար,
Ո՛չ հանքերիդ պէս հանքեր։

Հողը պտղաբեր՝ ազնիւ,
Քարերը ողջ ակունք են.
Գետերը լիքն անթիւ,
Կարմրախայտ ձկունք են։

Լերինքը ծաղիկ հագած՝
Իբր հարսնացեալ օրիորդ.
Եղջերուքը վաստակած,
Ի՞նչ շահ, որ չունիս որսորդ։

Այգեացդ ամէն մէկն,
Էր դրախտ Եդեմական.
Բայց անբաղդութեան տէգն։
Խլեաց լարը կենսական։

Թռչո՛ղ՝ թշնամիք բերկրին,
Մեր աչաց արտասուքով.
Յուսամ՝ երկար չի մնան,
Նրանք էլ ուրախ հոգւով։

Ասուած ամենագէտ է,
Անսահման արդարադատ.
Անաչառութեամբ դիտէ,
Լաւին լաւ տալ, վատին վատ։

Ես եմ Սէյեաթի կինն,
Մաղաթեան տոհմի Ոսկին.

Հայրենեաց կաթողինն,
Հաւատացէք իմ խօսքին։
1858 28 ի Վայոց ձորն։

Տէրէն Մաղաքիանց*

ԵՐԳ ԲԱԳՈՍԻ

Ակուռիին մեծ կարասին բոլորտիքն են բազմեր
Աւագ իշխանք, ծեր պարոնայք ժողովք են հոն կազմեր,
Այո՛ այո՛ ժողովք են հոն կազմեր։
Սաստիկ է վէճն մեծ է խնդիրն զոր հոն տեղ կ'խորհին,
Թէ ի՞նչ կերպով դարման լինէր հիւանդ մեր աշխարհին.
Այո՛ այո՛ հիւանդ մեր աշխարհին։
Մէկն այս կ'ըսէ մէկն այն կ'ըսէ կծագի ոյսն առուռն,

(*) Ոսկի Յովսէփեան անուն։ Է սա բարեպաշտուհի ամուսին ազգային քաջահամբաւ երգչի Տ. Գեւորգի տէր Յովսէփեան Մաղաքիանց. Սէյեադ մականուանելոյ։ Երանի թէ Հայաստան շատ ունենար այսպիսի կաթողինք հայրենեաց և ուղղութեամբ տիկնայք։ Ռ. Յ.

Ինձ լսեցէք տեարք կը գոչէ աւանին պէտն արթուն.
Այո՛ այո՛ աւանին պէտն արթուն։
Թողթատն առնու կ'ըսէ Բագոս և փառաւք ապրի շատ,
Իսկ ցնծութիւնն ըլլայ դշխոյ և գահն ալ յԱրտաշատ
Այո՛ այո՛ և գահն ալ յԱրտաշատ։
Այսպէս մեզի նոր ցնծութեան արևներ կը ծագին,
Առողջ կըլլայ մեր ժամանակ և նոր մեր աշխարհին։
Այո՛ այո՛ և նոր մեր աշխարհին։

ԵՐԳ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Ահա բաժակ ուրախութեան
Ի սէր յաւերժ վիւութեան
Զի՞ վայելուչ՝ որդիք Հայկեան
Մէկտեղ հրճուին և ցնծան
Կեցցէ՛ սէր և վիւութիւն

Կրեմք մի սիրտ մի արիւն։

Վերցուր աչքըդ յերկնից կամար
Փայլի հեռուն աստղ մի պայծառ
Եւ դու ո՛ Հայ զարթիր սիրտ առ
Հայոց բաղդըն ալ չէ խաւար։

Կեցցէ՛ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն։

Բան է այսչափ բաժանում
Ըլլամք ուրախ և խնդում
Ցախանձ, վրէժ, ձեղ թողում
Անդունդք և վիհք անհատնում

Կեցցէ՛ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն։

Փորձ մը ըրինք բաժանման
Փորձ մ'ալ ընենք միութեան
Լեցուի փափաքդ Հայաստան։
Տես որդիք քո միանան

Կեցցէ՛ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն։

Ինչ և ընեմք ինչ կերպ առնեմք
Ո՞չ ը գիտեց թէ մեք Հայ եմք
Ո՞վ չը գիտեր թէ եղբայր եմք

Արիք ծիծաղ դիմաք երգեմք ։
Կեցցէ՛ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն ։

Ո՞ր բռնաւոր ո՛ր օրէնքներ
Կը պատուիրեն թէ մի սիրեր
Ազգիդ օգուտն ու բարիքներ
Սիրոյ գահն է յերկինս 'ի վեր ։
Կեցցէ՛ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն ։

Ի ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ահա հրեշտակ ոսկեփետուր թռուցեալ բարձուստ երկնաճէմ
Հայոց բաղդին հեծեալ ի կառս բարձր գոչէ ղուարթադէմ

Հզօր պատգամ
Ի վերուստ գամ
Միութիւն հայք
Եւ նոր ձեզ կեանք ։

Տրուփեն ուժգին և լանջք և սիրտ.
Խաղայ արիւն ի թինթ ի թինթ,
Մեղը կաթէ Սուրբ սէրն ի խինդ
ՅԱռաքինոյն ի Հայու սիրտ
Սիրաբորբոք համբոյրք բղխեն
Արտասուաթոր աչկունք ցօղեն։

Ելիք Հայկազունք
Ի սէր փութասցուք,
Եռանդուն մատիք
Ի համբոյր հեզիկ
Տուք համբոյր մի ևս
Բացէք զձեր թևս
Տուք համբոյր մի ևս
Սիրոյ է պարգևս։

Կեցցեն յաւերժ վեհ Հայկազունք
Անմահութեան սիրուն սերունդք
Կեցցէ յաւերժ Հայկայ ոգին
Մեզ են վկայ երկիր երկին։

Անկաւ պարխապ ժանտ նախանձուն ոչ ի շան-
թից ահարկու
Այլ յանիարկի և եթ սիրոյ վերաստացեալ
կենատու

Երկին երկիր
Կան ի յակաճիռ
Ընդ Հայ ազգիս
Բիւր հրաշալիս

Բացցին անդունդք սեաւ անյատակ
Ծածկել զազգին հին յիշատակ
Տիեզերաց բացցին մատեանք
Անդէն դրոշմել Հայոց պարծանք

Կեցցէ Հայոց սէր պանծալի
Բերող փառաց նախանձելի։

Երիք Հայկազունք
Իսէր փութասցուք ևն ևն։

Գ. ԱՑՏՈՒԼԼԱՀ

ՈՂԲԱԼԻՑ ԲԱՆՔ ԱՆԻ ՔԱՂԱՔԻՆ ՀԱՅՈՑ

Ը— Հայոգիի ոգի, որ գնայիր ամ է գերեզմանքեն։

Անի քաղաք նստեր՝ կուլայ,
Ձկայ քսող՝ մի լայ, մի լայ։

Կ՚ըսես քիչէ, թող, մնայ՝ լայ,
Ա՛խ, երբ լսեմ՝ մի լայ, մի լայ.

Շատ ցաւերով կայրիմ տապիմ,
Զուռնիմ մէկ մարդ հաւատարիմ.
Որ խղճալոյն գայ մօտենայ,
Հիչ չէ ըսէ մի լայ, մի լայ։

ՅՈՐԴՈՐԱԿ

Ա՛խ Հայ տղայ, խղճա՛ ինծի,
Տես թէ քո Անին ի՞նչպէս է.
Հերիք ես լամ դու չգթաս,
Զէ՞ քո Անին ախտոս է.

Ա՛խ ու վախով օրերս անցաւ,
Լալէն աչքերս կուրացաւ.
Որբ մնալն ինձ վիճակեցաւ,
Բախտս բնաւ զիս մոռացաւ.

Կորուցերեմ թագաւորներ,
Ժողվեր եմ գլխուս քէօռ բաւվեր.
Որք միշտ կերգեն "Անին անցաւ,
Անին անտէր աւերեցաւ"։

Անին իմ շատ մարդաբնակ,

Մնացեր եմ դառն աւերակ,
Իմ լացն իմ կոծն իմ աղաղակ,
Անտէր որբերու նմանակ։

Երբեմն էի շատ անմեան,
Հայոց քաղաք Արևելեան.
Աւերեր եմ սեփհատակ,
Նստեր կուլամ ես միայնակ։

Լեկար տեսար դարձեր կերթաս,
Լալով կըսես "Քարէ՝ Ջան".
Ասուած սիրես չ'մոռանաս,
Մասիս սարին երբ մտնենաս։

Ըսես իմ քոյր Արարատին,
"Նորեր ի՞-լայ ո՞ իրեղ Անին".
Կ'ըսէ, երբ աւերակը կ'ըտես,
Թէ՝ "իմ Անի հերի՞ է լաս"։

"Նոր Դար Հայապանի. է Մոսկուա"։

ՀԱՅԱՍԻՐ ՕՄԷՆ

ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

ԻՂՁ

Ո՞ւ ընկալ՝ի գիրկդ մայրդ Հայաստան,
Զորդիս քո սիրուն ցրուեալ աստ և անդ,
Տես՝ ի՞նչպէս սիրովդ և քու կարօտովդ,
Վառուած բորբոքած քու տեսոյդ ցանկան։

ՅՈՐԴՈՐԱԿ

Ելի կայ ուրեմն ով մայր Հայաստան,
Նոր ոգի զդեցիր փառք անվախճան։

Օն զրահաւորիմք ով որդիք Հայկեան
Մեր մօր արցունքներն ջնջել յաւիտեան,
Զօրանանք սիրով և սուրբ միութեան,
Ելանք ախոյեան ընդդէմ թշնամեաց.

ՅՈՐԿԴՈՐԱ

Հապա գործելու ժամանակն հասաւ,
Հայրենասիրին կայ փառք անզբրաւ։

Ս. Գ. Գ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

ՆՈՒԷՐ

Ի ՀԱՆԴԻՍԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Գ. ՏԱՐԵԴԱՐՁԻ

Ելիք Հայկայ քաջ սերունդք,
Թորգոմայ վեհ զաւակունք
Թեւ թեւ մտած առնունք պար
Եւ բարեւենք այս ամիսունք։
Բարեւենք քաղցր երգերով
Մեք միացեալ սուրբ սիրով
Ուխտենք մնալ մինչ ցմահ
Ազգանուէր սրտերով.
Ուխտենք ոմ Հայեր
Մի՛-ի՛-ն եւ Սէր։
Եկէք եղբարք միաբան
Մի սիրտ ըլլանք անբաժան,
Առաջնորդէ մեզ Օրէնք
Քաջակիրթ ազգաց նման։
Այս միութեան մեր վկայ
Թող աշխարհի որոտայ.
Դարուց 'ի դարս յիշատակ

Տարեդարձիս այս ներկայ
Ուխտենք ո՛վ Հայեր
Մի՞ոլի՞ն եւ Սէր։
Զար նախանձու վատ կիրքեր
Ալէջը պղծեն մեր սիրտեր։
Ի բաց ՝ի բաց թշնամանք
Առնուենք միրոյ համբոյրներ։
Ընկեր գընկեր թոզ գրկէ
Եւ իւր սրտին կցուրդէ
Ջերմ արտասուաց կաթիլներ
Ուխտիցը վկայ դոչէ

Ուխտենք ո՛վ Հայեր
Մի՞ոլի՞ն եւ Սէր։
Մ՞օր մեր թշուառ կաթոդին
Հայրենեաց տխուր ոգին
Տեսնէ զմեզ սուրբ սիրով
Ու չ՚հեծէ լալագին։
Ջուարթ դէմքով մեր վրայ
Հաշտ ակնարկէ ու խնդայ
Մատուենքն ՝ի լոր քաղցրալուր
Ընդ մեզ երգէ ու ցնծայ։

Ուխտենք ով Հայեր
Մի՞-ի՞-ն եւ Սէր։

Ելէ՛, ողջոյն դիւցազանց
Նուիրական դամբանաց
Աւետելով թող սիրէ
Ծաղկանց փունջեր հեռն առած։
Ողջոյն ընդ ձեզ Դիւցազունք
Պաշտելի քաղցր ածիւնք
Աւետեմ Սէր Մի՞-ի՞-ն
Զոր ուխտեն արդ Հայկազունք։

Ուխտենք ով Հայեր
Մի՞-ի՞-ն եւ Սէր։

Կ. ԿԻՒՐՃԵԱՆ

ԲՆԱԿԱՆ ՕՐԷՆՔ

ԿԱՄ ՃՇՄԱՐՏԱՆՄԱՆ ՊՏՈՒՂ ԵՐԵՒԱԿԱՑՈՒԹԵԱՆ

Յաւուր միւսմ մէկ քարտեսաս
Գնաց գործիքով յանապատ։

Որոնելով՝ գտաւ մէկ քար,
Որ վասն արձանի էր յարմար։
Սկիզբն արար նրան տաշել,
Այս կողմից մինս կողմ քաշ քաշել.
Երբ որ քարն յոյժ նեղացաւ,
Կամաւ Տէրին լեզու ստացաւ,
Ասաց քարհատին, ոչ տգէտ,
Ի զուր են քեզ կոչում վարպետ.
Ընդէր ես չարչարում դու զիս,
Ինձանից ի՞նչ շինել կուզիս։
Քարհատն տուաւ պատասխան.
Թէ ոչքան որ արտաքոյ կան,
Ամենեքեան են պարտաւոր—
Էնիլ աշխարհին հարկաւոր։
Իսկ դու անկեալ ես ատ անշահ,
Իբրև յամառեցեալ ագահ.
Ատուած ոչ ստեղծ անշահ բան,
Որ յաւերժ անպիտան մնան.
Վասն որոյ՝ երբ որ քեզ տեսայ,
Ինքս ինձ խորհիլ սկսայ,
Որ քեզնից մէկ արձան շինեմ,
Քաղաքի հրապարակն դնեմ։

Յայնժամ քարի պէս անլեզուն՝
Իբրև լուսաւորեալ գիտուն,
Ասաց. յիմար, գնա՛ քանիզ,
Զուր նեղութիւն մի՛ տալ ջանիզ,
Առաջ քեզ շինի պիտանի,
Դու ես գլուխ անպիտանի.
Քանզի արարածք ամենայն,
Իրանց նախկին դրութեան կան.
Միայն մարդն իւր չարութեամբ,
Իսկն ասեմ, յոյժ ոգիտութեամբ
Յաւէտ խոտորնակ հակեալ վ
Բնական օրէնքն քակելով,
Ստեղծողքն ստրկացոյց,
Իւր երկար կեանքը կարճեցոյց։
Նախ կապրէին ամս հազար,
Այժմ հարիւր ամ էլ դժուար,
Թէ մարդն կեանք ունիլ կարէ,
Վասն զի միտքն տկար է։
Քարահատն՝ երբ այս լսեց,
Քարին աղաչել սկսեց,
Թէ արի, ինձի ողորմիր,
Ասածներիդ միտքը պատմիր.
Մի՞թէ մեր կենաց կարճութեան

Պատճառն է օրէնքն բնական։
Այո՛, պատասխան ետ քարն.
Մարդից խելօք է տակարն,
Կամ իւրաքանչիւր անբանն,
Թռչունն՝ ձուկն՝ գազանն
Տարին մէկ ընդ. իդականի
Պաղաբերութեան սէր կանի.
Իսկ դուք դարձուցիք զայն 'ի խաղ,
Թէ ձեր և թէ տղայ մատաղ,
Գիշեր՝ ցերեկ միշտ անդադար
Նրանով էք անում մաղար։
Այնքան ճնշվում էք՝ թալկանում,
Մինչ ձեր նիւթն ջուր է դառնում
Մին պտուղ որ ջրից լինի,
Որա կեանքն ի՞նչ կու լինի.
Տան, քան կամ երեսուն,
Քառասուն, յիսուն կամ վաթսուն։
Այո՛ տեսէր, որ ապէ մարդկան
Է անբանից գլուխ անքան.
Իսկ դու կամիս զիս տաշելով,
Յայսկոյս յայնկոյս քաշքաշելով,
Կանգնել հրապարակի մեծ արձան,
Որ ինքդ ես կոծլ անպիտան։

Լաւ նայիր սերմանահանին,
Տե՛ս՝ որքան զգաստ է բանին,
Որ միշտ ցորենի լաւերն,
Կընտրէ, ոչ թէ որդնակերն.
Վասն զի սերմն որդնակեր
Ո՛չ կարէ լինիլ պտղաբեր։
Այնպէս թուլացեալ նիւթ մարդկան,
Պտուղ կուտայ նուաղական.
Զի լցացած հարիւր տարին,
Կը մնայ կենաց ճանապարհին։
Թէ կատարէք կարգն բնական,
Կապրէք որպէս Մաթուսաղան.
Սէյեաթդ 'ի զուր մի՛ բարբանջել,
Մարդից ի՞նչ կամիս պահանջել։

1857 25/5 'Ի Վայոց Ձորն Հայոց։

Ի ՃԱՒԱՐՃԱԿԱՆ ԴԱՀՏԻՆ ՎՐԺՔ

Ինամբ.. որոտան բարձուստ բոմբիւնք
Այրարատեան դաշտն 'ի վայր.
Աչի արանց արիւնք յեռանդն առատանան 'ի
հրապայր։

Հրաւէրք հայրենեաց հռչակին 'ի դիմաց
Հոդիք Հայկազանց բորբոքին 'ի հուր.
Ոչք երկնաւորին պատկին էք կարօտ
Ոչք երկնաւորին փառաց երկնայորդ՝

Հա՛ռ՝ օ՛ն արի արանց մանկուանք
Հայրենասիրէ՛ք Հայկազունք.
Հա՛ռ՝ օ՛ն 'ի ղէն գունդագունդ
Յեռեալ 'ի պար թունդ 'ի թունդ
Իղէն 'ի վրէժ, օ՛ն անդր յառաջ.
Իղէն 'ի վրէժ, մի՛ ձախ մի՛ յաջ
Օ՛ն անդր յառաջ,
Մի՛ ձախ մի՛ յաջ,
Օ՛ն արդր յառաջ,
Յառա՛ջ, յառա՛ջ.
Հա՛ռ՝ օ՛ն, յառաջ։

Հայկեան փանդռանց որոտընդոստ դռնչին բարբառք մարտագոռ.
Դառնագոռոչ անդրադարձանէ Պարսիկ կերկերն 'ի շեփոր։

Շարժեն հրեշտակք թեւս լուսադողդոջս.
Ճիւաղք ի ձիք սուր կայտառեն 'ի դրժոխս.
Շունդն շանթառաք զեթերոք փարի
Յարուսիեն սանդարք 'ի խոլ խաւարի։

Հանգ՝ օ՛ն արի արանց մանկունք և այլն։
Մամիկոնեան սաւառնեցաւ դրօշուն յայերս գոգ
ծալ ծալ
Ի ճակատուց 'ի Թշնամեաց՝ սա ոչ գիտաց յու-
բաստ կալ.
Հեծեալ հրանըժոյդ վեհին Վահանայ,
Վըրէժ կանչէ արեան Կարմիր Վարդանայ.
Փռնչեալ բոցաշունչ դափր 'ի գարշապար
Ռազմամուտ վարգի յանժոյժ երիվար։
Հանգ՝ օ՛ն արի արանց մանկունք և այլն։
Իգուպարել մարտայարդար գարշապարաց Ա-
բրամայ՝
Գուան կորդրիք, Մասիք սարսեն, հռնչեն
սահանք Երասխայ.
Իգոհ 'ի գոհ տալ բիւրուցն ոստատրոփ՝
Տատանին դաշտակք, յառնէ շուինդն ապշոպ.
Կռուփ առ կռուփ կոփեն կմբրեայք, տէգ ասա
տէգ
Դղորդ առնուն տարերք կորովեացն 'ի վէգ։
Հանգ՝ օ՛ն արի արանց մանկունք և այլն։

ԷԶԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ

Ի բիւր ձայնից բնութեան շքքեղ

Թէ երդք Թուչին սիրողաբար
Մասուանք կուսին ամենագեղ
Թէ որ զարնեն փափուկ քընար
Զուռնին ձայն մի այնքան սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն։
Տուր ինձ քու ձեռքդ եղբայր եմք մեք
Որ մրրկաւ էինք զատուած
Բաղդին ամեն ոխ չարանենդ
Ի մի համբոյր ցրուին ի բաց
Ընդ աստեղաց ինչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն։
Երբ ալեւոր Մայր Հայաստան
Տեսնէ զորդիս իւր քովէ քով
Սրտին խորունկ վէրքն դաժան
Քաղցր արտասուաց բուժին ցողով։
Ընդ աստեղաց ինչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն։
Ինկատեղ լացինք մենք ի հընուամ։ ։
Եկէք դարձեալ յար անբաժան
Խառնենք զարտօսր եւ զկնտուամ
Որ բազմածնունդ ըլլայ մեր Ջան
Ընդ աստեղաց ինչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն։

Մէկտեղ հոգնինք մէկտեղ ցանենք
Մէկտեղ թափին մեր քրտինքներ
Ըզ հունձք բարեաց յերկինս հանենք
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր.
Ընդ աստեղաք ի՞նչ կայ սիրուն
Քան զանձկալի Եղբայր անուն։

Մ. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԱՐՏԵՒԱՕԳ

Ի ՎԻՀՆ ՄԱՍԻԱՑ

Գարուն էր կենացս դեռ,
Երկինք ինձ նայէր հաշտ.
Ինձի համար ձորն լեռ,
Կ'ծաղկէր և դալար դաշտ։
Թագն էր զարդն իմ վարսիս,
Քաջաց մէջ էի պերճ.
Շուտ զիս ղրկեց Մասիս,
Փառքիս վաղ հասաւ վերջ.
Հեծայ 'ի սեաւ իմ վեհ.

Անցայ լուրջ մարդերէ.
Որսալ 'ի գինայ դեհ,
Ցիռ եւ պարարտ երէ։
Ողջուն լերինք ու ձոր,
Ողջոյն տուին ծառեր.
Անշուշտ նիւթերն բոլոր,
Լեզու էին առեր։

Ինաքէ, յանկարծ կասեաց,
Ոտք իմ աշխոյժ սեւոյս.
Կալան զիս քաջք Մասեաց,
Տարան 'ի վերն անլոյս։
Փախաւ. Թռաւ սրեւս,
Ողբայ զիս, Սաթինիկ.
Առ իմ վերջին բարեւս,
Ազնիւ իմ հայրենիք։
Ի՞նչու բոլոր մարդիկ,
Ինծի դէմ են ելեր.
Ինչու այնպէս սաստիկ,
Կ'գոռան մրճեր, սալեր։
Ընդերծ եմ իմ կապէս,
Ի զուր Աղդս կ'խորհի.
Արնայ հեգ մ'ինծի պէս,

Վախճան տալ աշխարհի։
Ընէծք կը կապեն զիս,
Շընիկս, զուր կը մաշես.
Ակռադ, զանուր վզիս,
Կապեց հայր Արտաշէս։
Խիստ, խիստ են հոր մ'անէծք,
Դառն են և ահագին.
Անով կըլլան ո՛ մեծք,
Ոչ ինչ փառք ձեր թագին։

ԱՐՏԱՍՈՒՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ո՜ս գալար ծառ մի՞ անկեալ 'ի հայկայ,
Պտղաբերութեամբ ինձ նման չկայ.
Շեմ ես անափառ՝ իբրև սարդենի,
Հոգեն ատելութեան փչեաց՝ ես անկայ.

ՅՈՐԴՈՐԱԿ.

Ո՞ւր է սէր ուր է սէր զի նորոգեցայց.
Բաղդատեամ պտուղ իմ էր անբանակ,

Զաշխարհ լիացոյց երկար ժամանակ.
Ոստք իմ և արմատք 'ի բնէ խզեցան
Դառն ատելութեամբ՝ անսուր՝ անդանակ։
Տերևք իմ կանաչք վաղ թառամեցան,
Երակք անդամոյս 'ի ջրոյ քամեցան.
Կեղևն իմ քնքուշ որդնակեր եղև,
Գուցե այգեպանք այսպէս կամեցան։
Ի գալ ամարան աղդ իւրաքանչիւր
Ցնծալով՝ փութա քաղել զայգին իւր.
Իսկ ադգն Հայկայ ձեռն ի ծնօտի
Ա՛ւաղէ, հոսէ արտասուաց աղբիւր։
Սէյեադն ադգասէր յաղդէն բամբասէր,
Գիշեր և ցերեկ ողբալով ասէր.
Հայք զինադդ կարեն ճաշակել զպտուղ,
Զի չունին հաստատ հաւատ, յոյս և սէր։

ՍԷՅԵԱԴ

Օ՜երկնաբերձ գլխով սառնապատ լերին
Ո՞ր դադար առնու նախնակերտ տապան.
Ա՞ր զի՞ սաւառներ հայադրօշ արծուին

Զգել շուք ստուար ցճորայ կապան։
Այլուր արփին լուսատու, ոչ պողպատին փայլատու
Ցոր թագ կապեր Այրարատ, 'ի թագադիր Բագարատ
Ավ թորդոմաճեռ աղարծի մանկունք
Հարկ 'ի վերայ կայ փոխելոյ ընդ փոյթ
Զգօն լուրջ յոգի սուր յակն յուշ և յունկն
Առ 'ի ժամանել 'ի կատար անքոյթ
Ո՞ի լեառն ահա արփածին
Որոյ բարձունք փայլ հատին
Ցորդեալ զիւրն բիւր վրակ
Նոր աւետե եղանակ։
Ի գողտրիկ ծայր մատին
Թմբկահար պանծացին
Ընդ նմին անդադար
Քերելով զկիթառ։
Բազկացի 'ի շաղկապ
Բերկրեացուք ծափ 'ի ծափ
Զբաժակ թաթաղուն
Քամելով մեք հողոյն։
Համարիւն կեցցեն Հայք
Միշտ Արաեաց գոռոզ կայք։

Եւ 'ի նոր Բաղարատ
Ցնծասցէ Այրարատ։

Թ. Մ. Գ.

Ի ՎԵՐԱՑ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Ի զուր ամպերն որոտացին
Ու ամենուն սիրտ դող առաւ,
Ի զուր Հրեշտակ Մասեաց սարին
Հայոց բախդին վրայ լացաւ.
Սեւ փոթորկաց մէջէն արաւար
Տեսէք ի՞նչպէս կ'ելլէ պայծառ
Կու գայ ցնծալով
Ընծայ բերելով
Բիւր երջանկութիւն
Սահմանադրութիւն
Սահմանադրութիւն։
Ողջոյն աւուրն այն գերապանծ
Ուր բարձրացաւ 'ի լոյս յաղթող
Արդարութեան եւ իրաւանց

Եւ Աղդութեան յաւերժ կոթող
Արկոյն հիմունս անդնդալիր
Եւ մեծ գործոյն հանդիսադիր
Կուգայ ցնծալով ևն։

Ն՚ա բարձրացաւ, ու սեւադէմ
Ատելութեան խրոխտ ամբարտակ
Ինկաւ կործան, ու լուսաճեմ
Թըռաւ առ մեզ սեր անուշակ.
Որ զամբարտակն այն խորտակեց
Ու զսէրն անուշ մեզի խրկեց
Կուգայ ցնծալով ևն։

Ա՚հ, քնադաւառ մեր Հայաստան
Գերեզմանաց դու հայրենիք,
Նոցա վերայ փրշոց փոխան
Բուսանին զբաւարթ հոյլ վարդենիք.
Ահա ցաւած ճակատդ թառամ
Պայծառ ալրակ մի անթառամ
Կուգայ ցնծալով ևն։

Ա՚ւրթէ տեսանէ՞ք դուք հեռուանց
Հայոց սրամիտ մեծ ապագայ
Որոյ վերայ Յերկնից բարձանց
Փայլէ հրաշէկ աստղն Հայկայ.

Յայն ասպարէզ մեզ տալ հրաւէր
Եւ առաջնորդ աւետաբեր
Լուսոյ ցնծալով. ևն։

Մ. ՊԵՇԻԿԹԱՀԼԵԱՆ

Լոյ սերվերի կերտուն մեգամ
Վէր տավերի տարա զիւլամ
Սայէի ատլինտէ ճիւմլէ
Միլք ու միլլէթ պուլտի նիզամ։

Ապտ Իւլ-Ազիզ Շահի ճիհան
Օլսուն ճիհանտէ քեամլրան
Շէվքէթիյլէ հէմ պէր տէվամ
Էյլէ եարատպը միւսլիման։

Շան ու շէվքէթիյլէ հէր ան
Թապ'ը Շահի օլա ֆէրհան
Պեոյլէ ելալաս իլէ հէր կիւն
Օլուր է լրատը պէնտէկեան։

Ապտ-Իւլ-Ազիզ Շահի ևն.
Մաքտէմինլէ սէնին Շահա
Ճիհանի յալէտին ինեա

Իշխէ միլլէթճէ եէկղէպան
Իթմէքտէյիզ շիւքրիւն իյֆա։
Ընպտ-Ի-Ալ-Ազիզ Շահի ևն։

Գիրլուպ օլ տավէրի սէյեխտ
Նիզամը միլլէթի թէճտիտ
Հէման օլ Շահը զիյշանլըն
Օլա հէր բուղի եէվմի իյտ։
Ընպտ-Ի-Ալ-Ազիզ Շահի ևն։

Օ. Թ. ՇԱՀԱՆԷԱՆ

ԵՐԳ ՄՕՆԹՕՆԻ

Ընկերք յաղթութեան ժամն արդ հաս է,
Մեզ կ'սպասեն փառք առնունք քաջալեր.
Արեան ծարաւի մեր հատու սուսեր,
Կենաց թշնամւոյն թող կտրին թելեր.
Ո՛հ մեր ախոյեան թողին 'ի տագնապ,
Զըլլանք ահաւոր մենք ի զէն շտապ.
Փութամք արշաւել այր մի՛ վեհերոտ,
Մին ան անդր 'ի բաց սիրտք վատ և երկչոտ.

Ի զէն 'ի զէն, ճն անդը ի բաց
Սիրտք վատ և երկչոտ։

Թէ իմ ալևոր հերքս սևնային,
Այժս ինձ յետ դար, կորիճ դառնայի.
Նըժոյգ ձի նատած, բեխըս ոլորած,
Շեռըս թուր առած ես դաշտ կերթայի։
Ես դաշտ կերթայի—դաշտ Աւարայրի,
Ողողած ցօղած Հայոց արիւնով,
Ա՛զգ իմ սիրական, դու ազգ Թորգոմեան.
Քու կորցրած թագը քեզ յետ կուտայի։
Կ'ասէի Հայոց օրիորդներին
«Ճախեցէ՛ք հագի ձեր թանգ շորերը,
Թողէ՛ք պաճուճանք, զարդ. մարգարիտներ
Ճանգուտած ու գուլ են մեր թըրերը,
Տուէ՛ք բեհեղեայ մեզ ձեր շապիկը,
Որ մենք փաթաթենք մեր մարմնու վէրքը.
Վիրակապ հիւսէ՛ք դուք ձեր մազերից.
Այսպէս յայտնեցէ՛ք դուք մեզ ձեր սէրը։
Թէ ես լինէի հարուստ մեծատուն՝
Սընտուկներս լի ոսկով արծաթով,

Հատերու նման ես չէի լինիլ
Երբէք ազգասէր ուռնայն խօսքերով,
Համպանեա գինու Անհա խաչի տեղ
Կառնուի առատ գնտակ ու վառօդ,
Արձակ համարձակ կերթայի հանդէպ
Հայատեաց ազգին անթիւ զօրքերով։
Թէ ես լինէի մի երկրի իշխան
Կուտայի զօրքիս սատակ հրաման,
Շուտաքայլ երթալ դէպ 'ի Հայաստան.
Խլրդճուկ Հայ ազգին լինել օգնական.
Եւրոպ' Ասիա արեան գետերը
Կը վազցնէի հեղեղի նման,
Մինչև որ թագ, գահ ու ազատ կրօն
Ինձնից չատանար թշուառ Հայաստան։
Բայց՝ եթէ մի օր, մի ժամ, մի բոպէ
Ատուած լինէի մեր հողապնդին.
Ի՜նչ սուր սլաքներ պիտի շաղ տայի.
Մեր արենարբու թշնամեաց գնդին.
Նենդ . . . . . մոլի, Պարսիկ ոխերիմ,
Դարևոր ոսող դու Յոյն կրօնամոլ,
Գիտցի՛ք որ՝ իմ սուր երկայրի սրից
Անվնաս չէր մնալ ոչ մի ձեր որդին։

ՔԱՄԱՐ ՔԱԹՈՂԱՑ

ՀԱՅՐԵՆԻՔ

Թէ իմն Հայրենեաց քնար սգաւոր
Հեծէ տխրագին՝ իմ հոգիս է այն.
Թէ նորա բեկբեկ թելեր վշտաւոր
Խօսի ողբաձայն՝ իմ սրտիկս է այն։
—Թէ Հայ մուսային սրտառուչ նուագ
Դեռ կ'եղերերգէ՝ հառաչանքս է այն.
Թէ Հայաստանիս սեւ բաղդին հագագ
Լայ աղեկտուր՝ հեծեծանքս է այն։
—Թէ իմն Հայրենեաց կիսամեռիկ շունչ
Դեռ լսի տխուր՝ իմ ողբերս է այն.
Թէ լռիկ ճնշիկ հեծէ անշըշունչ.
Ո՜հ անկարեկիր իմ լալիքս է այն։
—Եւ Հայկայ փառաց յօժար ողբերգուն
Հարազատ լացողն իմ ձայնիկս է այն.
Զոր հաղար տարուան պարծանաց դարուն
Արձագանգ տուողն աղաղակս է այն։
—Իմ Հայաստանիս ցաւերուն հատոր
Ահա այս մաշած իմ կուրծքս է այն.
Սեւ սեւ թերթերուն էջ սրտակատոր
Արտասուք գրուած՝ իմ աղիքս է այն։

—Թե բանաս կարդաս արիւնոտ դաշտերը
Վարդագոյն ներկուած՝ իմ կողերս է այն։
Թ՝աչքէ անցընես շամփրած նիզակները
Մահահոտ ցցուած՝ իմ թիկունքս է այն։
—Թե Հայկ և Արամ, Վարդան Վահաններ
Ինկած տեսանես՝ իմ ուժս է այն։
Թե ղէնք թէ ղրահ թէ սուր թէ սուսեր
Փշրած կոտորած՝ ոսկորներս է այն։
—Թե արեամբ ներկեն ակունք եղեմին
Նշխար քաջերուն՝ իմ բիրերս է այն։
Թե քաղցր ու ամբիծ ալիք Եփրատին
Լեղի են դարձեր՝ արտասուքս է այն։
—Թե վէճիտ գետերն աղբերքն ալծաթի,
Լալիք առուակեն՝ երակներս է այն։
Թե Տիգրիս Գեհոնն Փիսան մռնչեն՝
Թե պղտոր գնան՝ իմ արիւնս է այն։
—Թե սառնամանիք ձմռան փոգաբեր
Լեռներն է պատեր, իմ գագաթս է այն,
Եւ քաղցրիկ զեփիւռն անուշակ հովեր
Ցրտագին փչեն, իմ շնչիկս է այն։
—Թե վտակ վտակ ցողէ ղյիշատակ
Ջայս տրամավաստակ, աչքերիս է այն։

Թէ տրտաձայնիկ երգէ զՀայաստան,
Կանչէ զՀայաստան՝ անկեղծ սէրս է այն։
—Թէ մթին խորշերն ու ձորեր լռին,
Սեւերով ծածկին, մենատանս է այն.
Թէ ողբ կը կարդան վայրերն եղեմին,
Ճնշած լերդերուս արձագանգն է այն։
—Եւ Հայաստանիս հողերը ուխտիւ
Պինդ սիրով գրկողն՝ իմ ձեռքերս է այն.
Թէ կը համբուրեն կաթոգին խնդիւ՝
Ո՛հ մայրակարօտ շրթունքներս է այն։
—Եւ Հայոց լերանց ցուրտ շուքերուն տակ
Ընկած ապաքաղդ՝ իմ ճակատս է այն.
Սասեաց սուրբ քարերն իւր բարձն ու պատակ,
Գրած սգաւոր գլուխիկս է այն։
—Եւ կիսակործան տաճարն Հայրենի
Սև սուգ է պատեր՝ տաղտուտս է այն։
Ուր շինչեալաւառ կանթեղ դեռ հիւծէ
Նուաղ առ նուաղ՝ իմ յոյսս է այն։
Ուր տխուր նատեր մաղերն են ծածկեր,
Իւր սևուկ աչքեր՝ սիրականս է այն.
Ձեռքերն 'ի ճակատ կռնակն 'ի հողեր,
Յուսով կոթլներ՝ Հայաստանս է այն։

— Գերեզմանս է այն։
Ուր երբ տեսանեմ զիմ հեգն Հայաստան
Ի գահ իւր փառաց՝ իմ բաղձանքս է այն։
Յայնժամ թող մեռնիմ յիւր ծոց մայրական
Զիմ վերջին շնչոյս միակ ուխտս է այն։

ՍԻՄՈՆ ՀԱՅԿ Մ. ՓԻԼԻԿԵԱՆ

Ի ԴԻՄԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Թէպէտ ես մեծ տան նշան եմ.
Ամենից ազնիւ իշխան եմ,
Ո՛չ մեռած եմ, ո՛չ կենդան եմ,
Օդնական չունիմ, ինչ անեմ։
Ով անցաւոր, ինձի նայիր,
Անբախտութեանս խնայիր,
Ի՞նչ կուլէր՝ փոքր մնայիր,
Իմանայիր, թէ ինչ բան եմ։
Թշնամիք մարդս մեռուցին,
Մէջքս ծանրութեամբ կեռուցին,
Ոտիքս ինծնեց հեռուցին,

Այժմ այլոց ապաստան եմ։
Հեռուն կոտրվեց սուրը,
Վնասուեցաւ առուտուրը,
Լեզվի դարձաւ քաղցր ջուրը,
Բաս ես ո՞նց չի յոդւոց հանեմ։
Ուրաջ կէր անձամբ անձին,
Այժմ կարօտ այլոց քանձին,
Սէրեադ, քեզ ասեմ առանձին,
Այրիացեալ Հայաստան եմ։

ՍԻՑԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔ

Իմ հայրենիքս ցիս կը կանչէ,
Հեռու եմ Հայաստանէն.
Հայու որդւոյն կը վայլէ
Հեռանալ Հայաստանէն։
Սիրէ արծաթ ոսկի գոհար
Գ'ափոփէ Հայաստանը,
Այն որ կ'ողբայ որդւոց համար,
Խղճալի Հայաստանը։

Խոր տխրութեան մէջ է թաղուեր
Թագուհի Հայաստանը.
Բոպիկ ոտքով աղաւ մաղով
Կ'արտասուէ Հայաստանը։
Ընդունթ երկինք ալ չ'ելիշեր
Մուռցեր է Հայաստանը,
Անախրտ Հայերն ալ չեն սիրեր
Անուշիկ Հայաստանը։
Ո՞հ թողէք զիս խօսիմ աղաւ.
Երգեմ միշտ Հայաստանը.
Անուշ երկիր կոյս անարատ
Աննման Հայաստանը։
Ընթեւ ծածկեր է իւր դէմքը,
Խաւար է Հայաստանը.
Հայոց արևը ալ մարեր է
Սև հագեր Հայաստանը։
Թ·ըշուառ սրտիս ձայն կը կտրէ.
Ողբալով Հայաստանը.
Ո՞հ չիկայ Հայ, որ սփոփէ.
Նուաղեալ Հայաստանը։
Թ·է և կտրի իմ վերջին շունչս
Պիտի պատամ Հայաստան.

Պլուս իմ մէջմը՝ իմ Հայրենեաց
Հապա մոռնեմ գերեզման։
Անդորրութիւն ես կը խնդրեմ
Սիրելի Հայաստանին,
Որեղ այս ձայնս չէ՛ չէ՛ կարող
Պոսկուն գերեզմանին։

Ա. ՀԱՅԿ.

ԵՐԳ ՑԱՒԱԳԻՆ

Իմ սիրելի զաւակունքս
Գ'թափառին օտար աշխարհ.
Ես ո՞ւր դիմեմ, ո՞ւր փնտռեմ,
Կը ծառայեն այլոց խոնարհ.
Անկայ՛ք որդեակ՛ք իմ
Ձեր մօրն այցելութեան։
Դարեր անցան լուր մը չառի,
Իմ քաջերս մեռան կորան.
Գ'ուլամ արիւնս կը սառի . . . ,
Մէկը չ'ունիմ տայ ինձ դարման։
Անկայ՛ք որդեակ՛ք ես.

Արիւնս ցամքած, սիրտս մաշած,
Դեմքս է տխուր մինչ յաւիտեան.
Եւ կարօտոյն իմ որդեկաց,
Միտի ինչնեմ սեւ գերեզման.
Ինկայք որդեակք ևն։
Ես գոռ հոլիս Թաւխտաւական,
Կերգեմ տխուր ի մէջ հոլոց.
Եկ արտասուենք Թանկ կորստեան,
Տխուր մահուան մեր որդեկաց։
Ինկայք որդեակք ևն։
Իսկ դու կառունկ իմ հայրենեաց,
Գնա հեռու աչքէս 'ի քաց . . .
Յեռին ողջոյնս տար զաւակացս,
Զի կեանքիս մէջ յոյսս է մեռած։
Ինկայք որդեակք ևն։

ՊԱՐԵՐԳ

ՎԱՃ

Ի խուսք 'ի պար
Հայրենասէր պանդուխտ Հայք

Իմինդ մեր ոտից թող Մասեաց բարձունքն

Ընդեղագոչ

Ու Հայս հանուր տան գանդիւն,
Հրաւէր կարդալ Հայ դիւցազներուն
Խումբ ի պար
Ո՛վ հայրենեաց քաջ որդիք
Մեր ոտից տրոփիւն բաբէ թնտացուց
Ակնկալու
Հայ սրտերն բոցակէզ
Յաղթական փառաց խմբել զհանդէս։

Ս. Գ. Գ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

Կար ժամանակ, որ և Հայերն
Աբքայ իշխող ունէին,
Եւ զինավառ անթիւ զօրքեր
Իւրեանց երկրում պահէին։
Կար ժամանակ որ և նոքա,
Ղման ծաղկած ազգերի,
Զարդարելով աշխարհ Հայկայ
Փայլում էին անուանի։

Բայց այժմ անտէր, անթագաւոր,
Գերի, ծառայ ցաւագին,
Այս տեղ այն տեղ խիստ չքաւոր,
Զարշարվում են գլխովին։
Այժմ նոքա անվախիթար,
Հայրենիքից զրկուելով.
Վայ են կանչում թշուառաբար,
Հալածանքներ կրելով։

Ի ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Հայուն աչքէն ալ չը հոսէ դառն արցունք
Հերիք լացաւ, հերիք հեծեց իւր բաղդին.
Հայն իւր վշտերին մոռցած տայ ընկերին՝
Սիրոյ համբոյր, սիրոյ ժպիտ եւ ծաղկունք։

Նոյեան աղաւնին,
Զիթենեաց ճիւղերդ.
Սիրելով գետին,
ՀԱՇՏՈՒԹԻՒՆ բերեր։

Ահա՛ եւ այսօր ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ։
Իբրեւ աղաւնին բերան Հաշտութիւն ։
Ոսկի թեւերին թաղ հնչէ՛ հայ քրնար ,
Որոց ենչեն ընդ հսկայեան ոտքը Շիրակայ ։
Համբոյր սիրոյ դրոշմեն յերեսս իրենց ,
Խաղաղութեան ձայնիւ թնդայ թաղաշխարհ։

Զայն տո՛ւք դիւցազանց ,
Որ Արտաշ ենչեն
Աստեղք Հայկազանց ,
Դորալոյս փայլեն ։

Ողջ սիրտ սրտի խառնէ միութիւն ,
Զի յաւերժասցի ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Մայր—Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ ,
Հին հին դարերից յիշատակ
Ալեաց մէջը պրտրում եմ ։
Բայց նոքա մինչ յեղ յեղուկ
Գղտոր ջրով եղերքին

Դարիւ դարիւ խմբելով
Փախչում էին լայտագին։
Ա՛րա՛ք՝ ինչո՞ւ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չը հասած՝
Սգաւոր ես ինձ նման։
Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սեգ հպարտ աչերից
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։
Մի՛ պղտորիլ յատակդ,
Հանդարտ հոսէ խայտալով,
Մանկութիւնը քու կարճ է,
Շուտ կը հասնիս դէպ ի ծով։
Վարդի թփեր թող բուսանին
Քու հիւրընկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչեւ առաւօտ։
Անշատալարդ ուռիներ
Սառ ծոցի մէջ քու ջրին
Ճկուն ոստն ու տերեւ
Թող թաց անեն առաւօտին։

Ափերիդ մատ երգելու,
Հովիւք թող գան համարձակ.
Գառն ու ուլը քու վէճիտ
Ջուրը մտնեն միշտ արձակ։
Ահեղքը ուռցուց Արաքսը,
Փրփուր հանեց իւր տակից,
Ամպի նման գոռալով
Էսպէս խօսեց յատակից։
«Խիզախ, անմիտ պատանի,
Ներհրս ինչպէ դարձեալ
Վրդովում ես, նորոգում
Իմ ցաւերը բիւրաւոր։
Սիրելի մահից յետո,
Ե՞րբ ես տեսել, որ այրին
Ոտից ցգլուխ պճնուի
Իւր զարդերով թանկագին։
Որի՞ համար զարդարուիմ
Որի՞ աչքը հրապուրեմ
Ճատերին՝ ինձ ես ատելի,
Ճատերին՝ ես օտար եմ։
Իմ աղգակիր գիժ քուռը,
Թէ և այրի ինձ նման,
Ըստրկօրէն տանում է

Գայթակղելի կուռ շղթան։
Բայց նա ինձ չէ օրինակ,
Ես Հայ հայիս կը ճանչնամ,
Օտար վեհայչռզելով,
Ես միշտ այրի կը մընամ։
Կար ժամանակ, որ ես էլ
Շքեղազարդ հարսի պէս
Հազար ու բիւր պչրանքով
Փախչում էի ամէրէս։
Յաստակ գարդ ու վճիտ
Կոհակներս ոլորուն,
Լուսաբերը մինչեւ ցայգ
Ջրիս միջին էր լողում։
Ի՞նչս մնաց այն օրից
Ո՞ր Ջրամօտ գեղերս,
Ո՞ւր իմ շէն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերս։
Տուրքը Ջրի ամեն օր
Իր սուրբ ծոցէն Արարատ,
Մայրախնամ ինձ սնուցող
Պարգեւում է լիառատ։
Բայց ես այն սուրբ Ջրերով

Սուրբ Ակոբի աղբիւրին
Պիտի ցօղեմ արտօրայքն
Իմ առելի օտարին։

Կամ կենաւոր իմ ջրով,
Ափերիս մօտ կըկղած
Իր աղօթքը կատարէ

. . . Կամ . . . Հոսած

Մինչ իմ սրդէքը (ոմն գիտէ)
Ծարաւ, Հօրմի, անտէրունչ,
Օտար աշխարհ յաճուռմ են
Թոյլ ոտքերով կիսաշունչ։ . . .

Ջերմ հերմ քշեցին
Բնիկ ազգը իմ Հայկեան,
Նոցա տեղը ինձ տուին
Անգութ խուժանքն Պարսկական։

Դոցա համար զարդարեմ
Իմ հիւրընկալ տիրերը,
Եւ կամ դոցա հրաւիրեմ
Ճաշուստ, պչրած աչերը։

Բանի որ իմ զուարակունք
Էսպէս կու մնան պանդուխտ՝
Ջիս միշտ սգաւոր կը տեսնէք,

Այս է անխաբ իմ սուրբ ուխտ։
Իբ չիսօսեց Արարչը,
Յարձանք տուեց ահագին,
Օրակ օրակ օձի պէս
Առաջ սողայ մոլեգին։

ՔԱՄԱՐ ՔԱԹԻՊԱՑ

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Մանկութեան օրեր, երազի նման։
Անցաք գնացիք, այլ չեք գառնալու.
Ո՛հ դուք երջանիկ, ո՛հ անհոգ օրեր,
Ընդունակ միայն ուրախանալու։
Հեզանից յետոյ եկաւ գիտութիւն,
Իւր ծանր հայեաց քոյլ աշխարհի վերայ։
Ամէն բան ընկաւ մտածութեան տակ,
Որպէս չմնաց ազատ կամ ունայն։
Գիտակցութիւնը յաջորդեց սորան.
Աղգի վիճակը ծանրացաւ սրտիս։
Ապրելու տուեց ինձ իւր քնարը,

(1) Տես Հիւսիսափայլ 1859 թիւ 9

Որպէս փարատիչ արտուամ ցաւերիս։
Ա՛մաղ, այդ քնարը իմ ձեռքում հնչեց,
Նոյնպէս լալագին, նոյնպէս վշտահար։
Ինչպէս իմ սիրտն էր, իմ զգացմունքը,
Ուրախացուցիչ չի գտայ մի՛ լար։
Ես այն ժամանակ միայն զգացի,
Որ այդ ցաւերից ազատվելու չեմ։
Որչափ իմ աղգս կը մնայ տրուկ,
Օտարների ձեռք անխոս տխրադեմ։
Մանկութեան օրերս ինչո՞ւ այդպէս շուտ,
Թռաք գնացիք անդարձ յաւիտեան։
Ես այն ժամանակ անհոգ ու ազատ
Կարծում էի ինձ աշխարհի իշխան։
Տէրութեան շղթան ինձ զգալի չէր,
Եւ ոչ բռնութեան անդութ ճանկերը։
Ձեզանից յետոյ ծանրացան նոքա,
Ո՛հ անիծում եմ ես այս օրերը։
Լռեա կաց դու քնար, այլ մի՛ հնչեր ինձ,
Ապրլան, յետ առ դարձեալ դու նորան։
Տուր մի այլ մարդու, որ ընդունակ է,
Զոհ բերել կեանքը սիրած աղջկան։
Ես պիտի դուրս գամ դէպ՝ի հրապարակ,

Առանց քնարի, անզարդ խօսքերով.
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ.
Խաւարի ընդդէմ պատերազմելով։
Ներկայ օրերում այլ ինչ սև քնար,
Սուր է հարկաւոր կորիճի ձեռքին.
Արիւն ու կրակ թշնամու վերայ,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կեանքին։
Թող պատդամախօսը, հնացած Դելֆի,
Իւր եռոտանու վերայ փրփրի.
Թող միջին դարու գաղափարներով,
Ամբոխը խաբել ճգնի աշխատի։
Թող նա թարգմանէ զրպարտութիւնը,
Թող մխիթարուի ծովի ափերում.
Մենք ազատութեան ենք միայն թարգման,
Միայն այս խօսքս ունիմ բերանում։
Ո՛վ Հայը, ո՛վ դու Հայը, որ երկնքում ես,
Խնայիր թշուառ մեր անտէր ազգին.
Մի՛ տար զոհ դնալ թշնամիների.
Նա այլ չէ լսում Դելֆեան հարցսակին։

Կոմս Էմմանուէլ ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

ՀԻԱԾԵՐՏ

ՔԱՂԱՍԻՐՏ ԶԻՆՈՒՈՐԻՆ

Մեր Հայրենեաց փափուկ հողեր,
Արեան գետակ են դարձուցեր.
Եւ այն դաշտերն Ազատութեան,
Թշնամեաց սուրք կը շողշողան։
Բռնաւորին սեւ թեւոց տակ,
Քանի դարեր հեծենք թշուառք.
Արիւն արձունք գիշերն ամեն,
Հերիւք լիցան մեր աչքերէն։
Բաշած աղէտքս ալ կը բաւեն,
Վրէժխնդրութեան հրաւերք հնչեն.
Ալ չեմ կրնար շղթայից տակ,
Գերի տեսնալ իմ քոյրն ու եղբարք.
Այսօր ինծի թող օր մ՚ըլլայ,
Յաղթանակի և կամ մահուան.
Գերի մնալէն քաղցր է ինձ ահ,
Հանգչիլ փառօք նախնեաց 'ի հող։
Օր ի՞րն արդեօք իմ հայրերէն
Հանդիստ մահուամբ լուռ ննջած են...

Այլ պատերազմ եւ յաղթանակ՝
Միշտ թողուցին մեզ յիշատակ։
Օ՜ն խաչանիշ դրօշուկս փուլթամ,
Հայրենալքեմ՝ 'ի պատերազմ.
Վասն ազգերուն գահն կործանեմ,
Եւ յաղթական նուագս երգեմ։
Օ՜ի խրախուսեն իմ Հարց սուրբք,
Ազգիս շղթայք ալ խորտակել.
Իմ Հայրենեաց քաղցր ապագան՝
Սրտիս կուտայ այժ քաջութեան։
Այո՛ հոն տեղ մահն ինձ քաղցր է,
Ազատութեան երբ փոքն հնչէ,
Հոն զոհուելցան շատ մեծ քաջեր,
Պարզելը յերթերս ազատ դրօշներ։
Ան թշնամւոյն արիւններով,
Դիականց վրայ անկինչ գրով՝
Իմ Հայրենի փառքն դրօշմեմ,
Եւ իմ ճակատս անոնց ցուցնեմ։
Բայց Աստուծմէ այս կը խնդրեմ,
Որ օր մ'ուրախ սրտով տեսնեմ.
Ազատութեան յաղթանակով,
Վերադարձն իմ՝ սուրբ Հարցըս քով։

ԳԵՐԵԶՄԱՆՔ ՀԱՅՈՑ

Լուռ և տխուր դաշտեր գեղեցիկ
Քաջ որերոյն ոսկիներով դեռահեղ
Ուր սուրբ շիրմաց ծածկէ տեսիլ խաղաղիկ
Զարմենաղան հաղար ծաղիկ գունագեղ։

Ընաղ Հայոց արևուն
Ընաղ Հայոց քաջերուն
Որոց կրեմք մեք արիւն
Օրհնեալ է Հայք, Ձեր անուն։

Ո՛վ մեհ նախնեաց, կարիճ ելբարց սուրբ շիրիմ
Ձայն մը տուէք, որ մեր արտասուքը ցամքի
Վանկ մը հերիք ցաւած սրտիցս որ բերկրիմք
Մեզ ժրպտեցէք շինեալ ատ Հայրենի։

Ընաղ Հայոց եայն։

Բացէք, բացէք մամուռ սաբորք սրբակիրք
Ցուցէք քաջացն ոսկերոտիքն համբուրեմք
Եւ համբուրէ մեր և ոգաւոր Հայրենիք
Մեք հարազատ որդիքս ողբամք ու երգեմք։

Ընաղ Հայոց եայն։

Գեռք Հայրենիք քան ի Ձեզ կան ալիք
Եւ դուն, լուսին, քանի կանդեղդ վառ մնոյ

Դուն ալ, սոխակ քանի ուզես դայլայլիկ
Երգեցէք զՀայն, լսեն սերունդք ապագայ
Ընդ աղ Հայոց կայլն։

ՆՇԱՆ ՉՕՀՐԱԳԵԱՆ

ԱՌ ԱՍՏՂԸՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Մեր սիրուն Հայրենեաց,
Բեւեռը շողշողող,
Մեր սիրուն քաջաղանց
Աճիւններն ցարդ հսկող,
Պայծառ աստղ որ այժմիկ
Լոյսդ կ'ընես թափանցիկ,
Մինչև Հայ պանդխտոց
Սրտերուն կուտաս քոյ,
Ո՛վ քաղցր Ցոյս, դուն միխիթար,
Տարագիր Հայոց թշուառ
Ի՛նչ աշխոյժ նոր ինոր,
Ի՛նչ աշխոյժ ոգևոր
Կարծարծես սրտերնուս
Ո՛վ Հայոց միակ Ցոյս

Զէ՞, ալ չվհատինք բնաւ ով Հայեր,
Մեզ քաջալերեն Յոյս և Ժամանակ.
Զէ՞ ալ չվհատինք բնաւ ով Հայեր,
Ժամանակին հետ յառաջ ընթանանք,
Յառաջ ընթանանք, հոն ուր հրաւէր,
Հրաւէր կարդան մեզ նախահարց աստղեր։

Թէ Հայկայ որդիք եմք
Թէ Հայկայ արիւն կրեմք
Ամենքս ալ իսուրբ սէր
Հայրենեաց ի նուէր,
Քաջ որդիք պանծալի
Ըլլամք միշտ արժանի։

ՊԱՐԵՐԳ

Հայկազունք պար բռնենք
Թև 'ի թև օն եղնենք
Ցնծութեան ձայներով
Եւ զուարթ սրտերով
Զի ահա ի նոր բաղդ
Զայն կուտայ երկինք արդ

Ի սուրբ կոչում ուխտեմք հաստատ
Անձնուէր գոլ պատրաստ։

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

ՅԱՂԹԱՆԱԿ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Մինչդեռ գիշերոյ խաղաղ թագուհին,
Յարծաթեայ կառայն ժպտէր զուարթագին,
Ի բարձանց Երկնից սիրոյ հրեշտակներ,
Մեզ կ'սփոռէին դափնեայ պսակներ։

Բանգռուն՝ քն երգէին զվեհն Ազատութիւն,
Որ մեզի բերեր փրկութեան ողջոյն.
Պճնէին ծաղկամբք դամբանքն լուռին,
Ո՛ւր Հայ դիւցազանց ոսկերքն հանգչին։

Երկնքէն ժամին պաղպաջուն աստղեր,
Երբ կը ծածանին Հայոց դրօշակներ.
Ազատ Մասիսի լերանց ծայրերէն,
Հայրենահրաւէր ձայներ կը հնչեն։

Ի ժոխոց դռներըն խորտակելով,

Վարդան և Մեսրոպը 'ի վեր վազելով՝
կանգնեն յաղթանակ պերճ Ազատութեան,
Վերանորոգեն փառքեր Հայութեան։

Ո՛հ ինչպէս հրճուին Հայոց զաւակներ,
Մինչդեռ կ'տեսնեն նախնեաց հին փառքեր,
Լաւ կրնայ մնալ մեր սիրուն քնար,
Մինչդեռ Աստղն Հայկայ շողայ լուսավառ։

ԱԲՐԱՀԱՄ ԱՅՎԱԶԵԱՆ

ՊԱՆԴՈՒԽՏ ԵՒ ԱՐՄԵՆՈՒՀԻ

Մինչ Հայրենի զուարթ յափանց տարագիր
Պանդուխտն թշուառ հեծէ յաղեաս տրտմ-
մալիր,
Անայնութիւն սուգ եւ հառաչք անդադար
Նայուսաբեկ դիտէ օտար 'ի յաշխարհ.
Բիւր սիսիանս ազգեն 'ի սիրտ թշուառին,
Արմենուհւոյն աչերն 'ի գութ երբ ժպտին։
Ո՛հ, մինչ նախնեաց թշուառութեան յիշա-
տակ

Բերէ 'ի տես զԹշնամւոյն յաղթանակ
Աւերակաց ահեղ բեկորք տխրական
Եւ մահաբոյր ցուրտ դամբանաց տեսարան
Նկուն վիճակ եղբարց, սուսերն անխնայ
Թէ Պանդխտին չԹողուն յոյս դուզնաքեայ.
Բիւր սփոփանս ազգեն յայնժամ եւայլն։
Թէ չարաշուք բաղդին 'ի ձեռս խաղալիք
Վաճառ անդարձ են միշտ նմա ողբ լալիք.
Ճնշիլ ընդ ցաւօք. Ծիւրիլ յանձուկ հայրենեաց
Մինչ ոգաւոր յաւարտ աւուրց իւր կենաց.
Բիւր սփոփանս ազգեն 'ի սիրտ եւայլն։
Գարուն զուարթ հէք մահացուաց այցելու
Ոչ Պանդխտին Թուի այնքան կենատու
Ամենուհւոյն քան զմրմունջ դողդոջուն
Որ 'ի կիսաւ երգէ զՍէր զուարթուն.
Առոյգ ընդ հուպ յարուցեալ յողբոց տխրա-
նուէր
Գոչէ Պանդուխտն.—Երկնազգեցիկ էքոյդ Սէր—
Բիւր սփոփանս ազգեա 'ի սիրտ Թշուառիս.
Ամենեւին, մինչդեռ 'ի Սէր դու ժպտիս։

Մ. Մ. ԹԷՍՏԻՃԵԱՆ

ՄԱՐԴ

Ո՞նացես բարեաւ սէր իմ սէր
Հրաւէր մարտին որոտաց
Թէ չեմ քաջաց ես ընկեր
Զրկայ բաժին ինձ փառաց։
Մի լար հոգւոյս իմ հատոր
Գուցէ դառնամ ոհ մի լար
Թ'անկայց մարտին ես 'ի գոռ
Տեսցուք յերկինս մեք զիրեար։
Եղբայրաղաւ չէ նախանձ
Որ բորբոքեալ յիս վառի
Ի սուրբ հողոյ Հայկազանց
Բառնամ զլուծ օտարի։

ԱՍՏՂԻԿՆ ՀԱՅՈՑ

Մուսայք մասեաց ելէք 'ի դաշտ
Հայել Հայոց Աստղիկն հաշտ
Ի դաշտ յորում սիրով Հայեր
Կարդան փառաց հրաւէր։

Տեսէք Հայոց տանն հարիզօն
կոյս մի շքեղ եւ գգօն,
Աչք վառվռուն, դեմք գեղանի
Հայուն սիրավ նա ժպտի։
Կեցցէ միշտ յաւէրժ
Կոյսն զուարդուն,
Վատին 'ի վրէժ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ։

Տեսէք յաջմէ քոց սիրալոյս.
Վառեցէք պատրոյկ սրտերնուս,
Եւ 'ի ձախմէ սիրոյ դրօշակ
Հայեր մնանք անոր տակ։
Յամանակին խորէն անքաւ
Կուսին մատն էր երեւցաւ,
Յրուեց մատոյ ամպեր մթին
Բացաւ սիրոյ մեզ ուղին։
Կեցցէ միշտ յաւէրժ
Կոյսն զուարթուն,
Վատին 'ի վրէժ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Հայեր յառաջ, նենդ ոխ 'ի բաց
Կուսին ելնենք արդ 'ի յայց,

Եղբայր եղբօր ձեռք սիրտ տուած
Համբոյր մի տանք սիրաղգաց։
Կամ Հայ Աստղիկդ, կամ անսասան
Շնորհիւ Վեհին Օսմանեան,
Եւ քեզ կեցցեն մանկունք Հայոց
Ի սիրարծարծ քոյին ծոց։
Կեցցէ միշտ յաւէրժ
Կոյսն զուարթուն,
Վատին 'ի վրէժ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Բ. Կ. ԹԵԼԵԱՆ

ՊԱՆԴՈՒԽՏՆ ԱՌ ԼՈՒՍԻՆ

'Նուաղեալ կենաց խբրև յոյս
Մութ և տխուր ես ո՛ կոյս
Եվ ել լուսին—ո՛հ և գուն—
Սիրտ մի ունիս զգայուն,
Աղդ մի թշուառ հայրենիք
Որ քաղ առեր ես զամպիկ։

Ընուլթիւն գեղոյդ երաժիշտ
Քեզ ասահելոց հոյլք նաժիշտ
Ի՛անհուն սիրուն ժլպիտ մի
Կարդեց դշխոյ զքեզ երկնի
Ցօղէ նշոյդ տխրանոյշ
Պանդուխտ հոգւոյս ցաւոց բոյժ։

Ո՛հ վիշտեցան սիրոս ու քնար,
Ես ալ քեզի պէս զաշխարհ
Պանդուխտ քայլով չափեցի
Ծաղկունք ծլին ասոկ քեզի—
Զեկաւ զեփիւռ մ՝անուշիկ
Շոհել իմ դէմքս յուսալիք,

Ոչ մ՝ունէի հայրենի—
Դրրախտ շքեղ՝ աշխարհի
Աւերակացն արդ պահպան
Քիւրան և անոր հրացանն—
Ցուցուր ժանտից, ո՛ լուսին
Զաղիր ոսկերք Վասակին։

Ընդ մ՝ունէի այն Հայն էր
Որ երկրիս վրայ տարուբեր
Կ՝երթար օտար աղգերէն
Մուրալ լեղու և օրէն—

Լուսին, ցուցուր Դու Հայուն
Փառքն իւր նախնեաց Շիրմերուն։
Սիրտ մ'ունէի—ան կոյն էր
Որ իմ հոգիս էր գրաւէր—
Ծաղկէ հատակ ծաղկի դէմք—
Հուր աչքն առին Շիրմանց վէմք
Մեր պանդուխտն ալ—լուսին
Դու այցելու եւ Շիրմին։

Ս. ՀԷՔԻՄԵԱՆ

ԱՔԼՈՐՆ ԾՆԱՒ ԶԱՔԼՈՐ

Ի հանդէպ "Ա՛խ, Յովհաննէս վարդապետ, ի՞նչ անէմ յեր ուշերին" յԱՌԱՔ Շէրինէ աստղելոյն։

Նստիր, Շիրին, ասեմ քեզ. մեկ օր մեր տան թաղքումը
Մէկ այսմաւուրք Հարեցի՝ հին դրքերի կարդումը,
Էս պատմութիւնս կարդացի աքլորների վարքումը,
Ծաւի զարկի ծիծաղեցայ զարմանքս մնացի աքլորին։

Բայց ինձ հաւատամ Տիրին, բովանդակ մէջ աշխարհին՝
Բաց յԱստուծոյ՝ մարդ չ'կամէ աքլորին ծնած տարին՝ ։
Ադամ երբ որ ստեղծաւ, սա տասնուհինգ տարուան էր,
Նոյն երբ տապան մտաւ, սա փղից մեծ հայ-վան էր,
Աշտարակի շինութեանն հազար սա նարդի-ւան էր,
Մոլէս գրեց, հաստատեց թիւ ու տարի աքլորին ։
Յիսուն տարին մէկ անգամ նատած տեղէն կ'խաղար,
Կուկլուկուկու կանչած առեն երկինք՝ գետին կը գոռար,
Ովկիանոս ծովի մէջ ծընկներէն ցած կ'ըզար,
Ահագին էր տեսաւ թիւնն զարհուրելի աքլորին։
Տեսքն սիրուն, գեղեցիկ, ոսկեթել զուսանչի պէս,
Փառքու պատիւն աւելի Սարը նատած Փաշի պէս։

(1 և 2. Ամենայն տանց վերջումն կրկնեա՛ զոյգասիկ տողս ։

Պուչումը կար գերաններ՝ Սօղանլուց մէշի պէս,
Բոլոր գաղանք՝ անասունք էին գերի աքլորին։
Ամուր մէկը չափեցի կանգնաց տեղէն դար
'ի վար,
Ոտէն մինչև կոտուցը երեք վերստէն աւել էր,
Քրմէճ ըրած ատենը սարեր՝ ձորեր կ'աւերէր,
Խելք չէր հանի հաստատիր՝ խոր ծերուանի աք-
լորին։
Ամբորիս գլխի վրայ քիրաջ ու քար հանեցին,
Տասն տարի բանեցան՝ հազիւ մէկ բերդ շինեցին
Կակարթի քեարթերու մնմեծ կակ թօփեր հանե-
ցին
Վայ կուգար էն բերդին որ չէր խոնարհիլ աքլորին
Փորումը՝ թէլցուէին, մեծ քեարվանն էր Խա-
նի պէս,
Կիսէն շատը մնուէր խարաբա վրանի պէս,
Ոտներուն հաստութիւնն էր ձիթհանքի գերանի
պէս,
Ամէն բանն էր կարգէ դուրս այս անճառնի աք-
լորին։
Ամարհս երբ որ բաժանեց մեծ թագաւորն
Վազարշ,
Ամբորս ոտամբ գլխովանքին էլաւ բաժին՝ մաս,

Էջմիածնայ ամբարից, Աստուծոյ օր, ճաշէ ճաշ,
կուտ կուտային ուԹ սօմար խաշած գարի աքլորին։

Երբ որ ինձ նոր վարդապետ, տարան, ձեռ նադրեցին,
Գիր՝ կտակով միաբանք աքլորս ինձ յանձնեցին,
Երբ Մկրտիչ վարդապետը Տնտեսապետ կար գեցին,
Շատ ժլատ էր, վայ եկաւ ծեր խղճալի աքլորին։
Աքլորս այսպէս քչակեր քանի մ՝տարի ապրեցաւ,
Ամէն աւել ԹԵ կախած՝ կուտ ու ջրէն կտրեցաւ,
Յանկարծ այս առաւօտուս չորտեցաւ՝ սատկեցաւ,
Քիչ մնաց՝ որ ասէի, Տէրն ողորմի աքլորին։
Շուտով մեր սպասաւորք հարիւր մշակ բերեցին,
Ամէնքն առան մէկ մէկ ուԹ փրԹանոց սուր կացին,
Մինչև հիմա հաղիւ ԹԷ յատակեցին՝ Ջարդեցին,
Կըշռեցին, հաղար փուԹ եկաւ կաշին աքլորին։
Ի՞ժիշկներն ինձ ասացին. աքլորէն ո՞վ որ ուտէ,

Համ ծերութեան, համ ցաւի ամէն կերպով
օգուտ է,
Միայն արի յիմարի պէս, թէ չ՚անեմ՚ ինձ ա
մօթ է,
Կանչեցի միաբանից անփորձ ճաշի աքլորին։
Առաւօտէն մէկ մշակ ձեռքը սուր սաթր մը
առաւ,
Աքլորէս մէկ հօխտա միս ծեծելով հոգին ելաւ,
Պէտք էր՝ որ քաւ֊թիթա լինէր, վերջը չոր կաշի
գաւառ,
՚Բարկութենէս քիչ մնաց՝ որ թքէի աքլորին։
Վանքի աշխուն ասացի. եահնուցը լաւ միս
հանէ.
Ասաց. էն լաւ կտորը խիստ թթուած ու տրտ
համ է.
Էս էլ կայնին չի կտրէ, ակռայ ելրբ կարնայ ծամէ,
Վախտին ուրիշ միս ճարէ՛, յոյս մի՛ անի աքլորին։
Յոյսս կտրած աքլորից՝ ոչխար ու գառ մոր
թեցի,
Բոլանդակ միաբանից ճաշ տուեցի, ճամբեցի,
Դարձայ՝ տխուր նստեցայ, շատ բարակ միտս
ծեցի,

թէ աշխարհումս կայ արդեօք մարդ արժանի
աքլորին։
Այսքան ընկաւ, որ ես քեզ գաւ խոստացեր
եմ, Շիրին,
Արի, գաւի փոխարէն հաճոյ եղիր աքլորին,
Կաշի տուր դաբբաղներին, պօլօճիկն աթտարին,
Միսը ծախէ սապօնչոց, հախէն արի աքլորին։

Ա. Վ. Ա. Հայ. Կոռօլէկ։

ՊԱՐԵՐԳ

Ո՛հ լինչ անուշ լինչ գեղեցիկ,
Մեր Հայրենեաց զեփիւռիկ,
Շնչէ զուարթ մեր սրտերուն,
Տալով աշխոյժ զօրութիւն,
Առ ինքն կոչէ զմեզ Հայեր,
Դ'գուռել յիւր ծոց ծնեալսէր,
Պար խմբելով երթանք ըռ ձոր,
Համբոյր սիրոյ տալ մեր մօր։
Հոն պարզ վճիտ եւ գեղեցիկ,
Մեր Հայրենեացն աստղիկ,

Հորիզոնէն արդ բարձրացած.
Կուտայ Հայոցս յոյս փառաց,
Անոր ուղղենք արդ մեր աչեր.
Անով վարուինք ով Հայեր։
Գար խմբելով երթանք լեռ ձոր
Համբոյր սիրոյ տալ մեր մօր։

Ս. Գ. Գ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

ԳԱՐՈՒՆ

Ո՛հ ինչ անուշ եւ ինչպէս զով
Առաւօտուց փչես հովիկ,
Ծաղկանց վրայ գուրգուրալով
Եւ մաղերուն կուսին փափկիկ.
Բայց չես հովիկ իմ Հայրենեաց
Գնա՛ անցիր սրտէս ի քաց։
Ո՛հ, ինչ աղու եւ սրտագին
Ծառոց մէջէն երգես թռչնիկ,
Սիրոյ ժամերն ի յանտառին
Ըզմայլեցան ի քոյ ձայնիկ,
Բայց չես թռչնիկ իմ Հայրենեաց

Գնա՛ թռիր սրտէս ի բաց։
Ո՛հ, ի՞նչ մրմունջ հանես վտակ
Ականակիտ եւ հանդարտիկ.
Քու հայելւոյդ մէջ անապակ
Նային ղնրեանք վարդն ու աղջիկ
Բայց չես վտակ իմ Հայրենեաց
Գնա՛ հասէ սրտէս ի բաց։
Թեպէտ թռչնիկ եւ հոմն Հայոց
Աւերակաց թռչին վերայ
Թեպէտ պղտոր վտակն Հայոց
Նոճիներու մէջ կը սողայ,
Նոքա՝ հառաչք են Հայրենեաց
Նոքա չերթան սրտէս ի բաց։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԵՐԳ.

ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Ողջոյն ընդ քեզ Հայաստան,
Մեր դիւցազանց գերեզման.

Ողջոյն Հայոց թագուհի,
Պահեալ փառաց հայրենի։
Երկինք խրկէ քեզ հրեշտակ,
Բիւր վարդք ծլին ոտքին տակ.
Իւր մէկ նայուածքն երկնագեղ,
Քու արտասուացդ ելլան դեղ։
Ո՞հ ինչ անուշ նըւագներ,
Պիտի հնչեն սոխակներդ.
Երբ քու ճակատդ պտակէ,
Ծաղկեանեան դափնիէ։
Անուշն յոտոց կ'խայտայ,
Եւ ծերունւոյն սիրտ ցնծայ.
Երբոր նշոյլք կը ժպտին,
Հայ աստեղաց նորածին։
Ո՞հ շիրմացդ քով ա՛լ հանդչի,
Անմահութեան վեհ ոգի.
Մինչ զբաւարթունք 'ի բարձանց,
Զբաակս սիրին Հայկազանց։
Փափուկ մատունքդ թող դրոշմեն,
Այն տառերով սոկեղէն.
Մեր սրտին մէջ "սէր եւ լոյս",
Մեր հոգւոյն մէջ "կեանք եւ յոյս"։
Քու վրշտերուդ փոխանակ,

Երկի՛նք կանգնեց յաղթանակ.
Քու վերքերուդ ալ դարման,
Քեզի Օրհնեալ շնորհեցան։

ԱԲՐԱՀԱՄ ԱՅՎԱԶԵԱՆ

ՄԱՂԹԱՆՔ ՎԱՄՆ ԱԶԳԻՆ

Տէր կեցո զու զհայս,
Եւ արա զնոսա պայծառ,
Կեցո զհայս,
Զոլորմանութիւնդ վերին,
Հաճեաց ձօնել նոցին,
Զի նովին մարդասցին
Ապրիլ յաւուրս։
Ով ոչ մեր ոչ մեր փութա,
Զաղջ մեր հոգոյն փրկեա.
Ի թշնամեաց։
Կորիս զաչս նոցուն,
Հաստ զարմանոց զբուն,
Եւ զաղջ մեր արտասուն,
Արա հզօր։
Ի՛ զմիդ հոգեստրած,
Զաղջ մեր արտահատած,
Փոյթ գուսանել
Ամենայն արարածեան
Ի վայր մեր ծնեալեան
Որ այժմ է ոչ փոկեան,
Օտար ազգաց

Ի՛ քո լիքեալ տեղի
Զաթոռ հայրապետի
Մեր հաստատեա
Զերկարութիւն կենաց
Հօր մեր աստուածապէտաց
Շնորհեա պետին մեր հարց
Որ զմեզ հովանէ։

Եւ Մ՚ԵԾԻՆ Վ՚ԱՐԴՈՆԱՅ Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՊԵՐԱՊԷՆ
ՈՐ ԿՈՊԱՐԵՑՈՒ Ի ԴԱՇՆ Ա՚ՈՐԱՅՐԻ։

Հո՛ւր բարկութեան համայն հայոց,
Փորփոքեալ զերդ փոց բարկաճայթ.
Ու կայծականցս փիւր փիւրոց,
Զարթոյց ՚ի մարտ սարս սարնապատ։
Օ՚ի վարանիմք արդ ասա եղբարք,
Դասարկ ձեռամբ, դասարկ ձեռամբ.
Ձեռամբ յարտաքսումն օն դրոյդ ՚ի դրոյդ։
Ի դրոյդ թռչիմք սրանամք, սրանամք, սրանամք։
Հո՛ւր զէն ՚ի ձեռին
Ու վրէժ ահագին
Սպասեն և կան
Քաջք Արշակունեան
Եւ յոր երկինք հանդիսատես
Զաշխոյժ նախնեաց հեղու ՚ի մեզ
Հապ օն քաջք քաջաց
Ընդ սասան կուրծս

Մխեցուք մկոնս
Ուժգին 'ի հարուած

Ռ. ՍԻՏԻՓՃԵԱՆ

ԿԻԼԻԿԻԱ

Երբոր բացուին դռներն յուսոյ
Եւ մեր երկրէն փախ ասայ ձմեռ
Զբնաղ երկինս մերս Ամենիոյ
Երբ փայլէ իւր քաղցրիկ օդեր
Երբոր ծիծառն 'ի բոյն դառնայ
Երբոր ծառերն հագնին տերև
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա
Աշխարհ որ ինձ եղուր արև

Տեսի դաշտերն Ոնուքիոյ
Լեռն Լիբանան և իւր մայրեր
Տեսի զերկինս Իգալիոյ
Վենետիկ և իւր կոնտոլներ
Կղզի նման ջնք մեր Կիպրեայ
Եւ ոչ մէկ վայր է արդարև
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա
Աշխարհ որ ինձ եղուր արև

Հասակ մը կայ մեր կենաց մէջ
Ուր ամենայն խղճ կ'աւարտի
Հասակ մը ուր հոգին 'ի տենչ
Յիշատակաց իւր կարօտի
Յորժամ քնարս իմ ցրտանայ

Սիրոյն տալով վերջին բարև
Երթամ ինձել յիմ Կիլիկիա
Աշխարհ որ ինձ եռուր արև։

ԱՂԱՂԱՏՈՒԹԻՒՆ

Ո՛վ քաջազուն՝ ձեզ հրաւէր.
Փութալ առնուլ զմերկ սուսեր.
Եւ հատատանել մեր Հայրենեաց,
Գահ սրբազան միշտ անմոռաց։
Աղաղակեն մեր Հայրենեաց,
Աղաղակեն մեր խեղճ եղբարց.
Աղաղակեն Ձեզ, վառ սրտեր,
Աղաղակեն, գեռ չէք լսեր։
Երկին, Աստուած ման հրաման,
Ա՛հ, հրաման ազատութեան.
Շուտ սթափիք՝ զինուորք գրուիք,
Եւ անվեհեր պատերազմիք։
Լեռներ, ձորեր, Մասիս անգամ,
Աղաղակեն կուսան պատգամ.
Հապա երթանք՝ 'ի Հայաստան,
Քաջ նախահարց հանգստարան։
Բաւ է այլապէս, ցաւ գերութիւն,
Օ՛ն, ո՛վ քաջեր, 'ի յաղթութիւն.
Երկինք, Աստուած մեզ են պաշտպան,
Աղա՜ս, ազա՜ս, մեր Հայաստան։

ԿԱՐԱՊԵՏ Դ. ՏԱԿԷՍԵԱՆ

ՄԱՐԴ ՀԱՅԿԱԿԱՆ

Յառաջ, յառաջ. — Մի՛ հայկազունք,
Յառաջ յառաջ, — Ո՛վ քաջազունք.
Օ՛ն, դիմեցէք շուտ — 'ի Հայրենիս,
Եւ գունդագունդ — Ընեցէք գերիս.
Հայկեան ցեղն — Լուծ վիճան,
Եւ կրոնքն — Նոր պաշտպան։

ԿԱՐԱՊԵՏ Դ. ՏԱԿԵՍԵԱՆ

ԻՂՁ ՄՐՏԻՍ

— Տուք ինձ ձերմակ ճանապարհաց,
Օդապարիկ երիվար.
Տո՛ւք. զի պայծառ լծուեայց 'ի բաց,
'Ի Զքեռպինն իմ աշխարհ։
— Այո՛ պայծառց յիմ Հայաստան,
Յերկիր յաւէրժ ծաղկազարդ,
Ուր խոսանն անմահուլեան
Գեռք եղեմայ ալեզարդ։
— Ուր բարձրանայ խրբոսոս 'ի վեր
Արարատն իմ օրօրան.
Ուր հատ բուրբ խրնկանուէր.
Հատ զուարթարար հայուլեան։
— Ուր եւ երբեմն պայծառացեալ
Քաջ բանաստեղծք լծորդմեան,
Ընարօք իւրեանց ոսկեբարեալ
Գեղգեղէին սրբաբան
— Մո՛ն, ածէք ինձ զիմն սիգաքայլ,

Սիրտս իմ մաշեալ նուաղել.
Քանի ամիս են՝ զի չեմ տեսեալ
Ընդհայրենիս ցանկալի։
— Հայաստան իմ, սուրբ Հայաստան,
Հոգւոյս պայծառ յիշատակ.
Ի՛ր թողեր զիս 'ի քաջական
Վայրս դառնաշունչ, դժնդակ։
— Մաշիմ մաշիմ ես տառանիր,
Ընդ տառեղջք հիւսիսի.
Հալիմ. . . . աւա՜ղ ես չքաւոր . . . .
Ո՜հ, Հայրենիք քաղցրալի։ . . . .

Ս. ՀԱՀԸՋԻՋԵԱՆՑ

Ի ՄԱՀ

ԳԱԲՐԻԷԼԻ ԵՐԱՆԵԱՆ

Քաւ ցաւքս շիրմիդ վրայ ուր վա՜հ, կոյ թողուած
Առոյգ հասակդ և պտղիդ հաւր երիտասարդ
Զէ թէ միայն ախուեանք ծաղիկք լի ձեռքով
Զէ թէ միայն արցունք անհուն ցաւերով,
Այլ և ձօնեանք փշոտոտաբ
Երգերն անուշ Քնարին
Որոյ փարուկ թելերը
Դու հիւսեցիր պտտագին։
Այն նուագներն որ քու բերնէդ արտասան։
Երիտասարդ յոգնուն աւերակաց ցիր և ցան
Լսեց զանոնք 'ի դամբանացն Հայրենի
Եւ սիրեցաւ Հայաստանեայց վեհ Ոգի

Լսէ զանոնք և դու ալ
Մահուան քունէն արթնցիր
Այն քնարին թևերով
Յանմահութիւն էլ թռիր։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԱՌ ՍԷՐ ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ

Օտար երկիր թափառած
Անքուն աչք կամ ցաւած
Իմ սիրելւոյս կարօտցած
Զերկայ մէկն որ կարեկից
Ելլայ ցաւած իմ սրտիս։

Ով հայրենիք իմ սիրուն
Ահ, ուշքդ ինս անուշդ
Արդեօք պիտի չըտեսնեմ
Քու լուսափայլ զուարթ դէմքդ։

Հառաչանք բիւր 'ի սրտէս
Արտօսր հեղուն աչերէս
Իմ սիրելւոյս կարօտցած
Ձեն ինձ երբէք մխիթար
Ոսկի պատիւ սէր օտար։

Ելլ ես անոր սիրուն ջոհ
Կ'ընեմ զամենքն սրտով գոհ
Միայն թէ յոյս մ'ունենամ
Իմ սէրս տեսնել միանգամ։

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆՑ